



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պ. Պ. ԱՏՐՈՒՆԻ


ՕԳԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ Գ. ՇԱՀՐԻԿԵԱՆԻ

Ն Ա Խ Ն Ա Կ Ա Ն Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն


Վ Ա Զ Ա Ր Ա Կ Ա Ս Ա Կ Ա Ն Գ Ի Տ Ե Լ Ի Ք Ն Ե Ր Ո Ւ

Ե Ւ

Տ Ո Մ Ա Ր Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ե Ա Ն




Ի Պէտա Ազգ. Նախակրթաբներու



Կ. ՊՈՂԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱԹՊԱՍԻ ԱՄԻՐԵ»

1914



ԳԼՈՒԽ Ա.

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿՈՆ ԳԻՏԵԼԻՔ

§ 1. — ԸՆԴՀԱՆՐԱԹԻՒՆԵՐ

1. Վաճառականութիւն. — Մարդ չի կրնար ինքն անծամբ արտադրել բոլոր այն բաները, որոնց պէտք ունի. բայց կրնայ ուրիշներու տալ ինչ որ ունի առատ եւ աւելորդ, փոխարէն ընդունելով անոնցմէ ինչ որ կը պակսի իրեն: Այսպէս՝ մարդոց միջեւ կը հաստատուի փոխանակութիւններու շարք մը, որ վաճառականութիւն կը կոչուի:

Վաճառականութիւնը, սովորական առումով, կը նշանակէ առնել ու տալ — առեւտուր — այսինքն աժան զնուած սան մը սուղ ծախելով շահ մը ընել: Բայց ըստ առեւտրական իրաւագիտութեան՝ վաճառականութիւնն է նախնական կամ բնական նիւթերու ծեւը փոխել, ծեւը փոխելէ առաջ նոյնութեամբ կամ ծեւը փոխելէ ետքը ծախել, ամէն տեսակ շարժուն իրեր փոխադրել կամ փոխանակել, վարձու տալ կամ վարձել, այս գործողութիւնները կատարելու կամ անոնց կատարումը դիւրացնելու միջոցներ, հայթայթել, եւ այս ամէնքը, որոնք վաճառականական գործառնութիւններ կը կոչուին, շահ մը ընելու նպատակաւ:

Հետեւաբար, ըստ օրինի վաճառական են հետեւեալները՝ որ վերոյիշեալ գործառնութիւններէն մին կամ միւսը կ'ընեն.

1. ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐ. — Նախնական նիւթերու (բուրդ, մետախ, փայտ, եւն.) ծեւը փոխելէ ետքը (կերպաս, մանած, բուղբ, եւն,) մեծաքանակ կը ծախեն:

2. ՄԵԾԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆԵՐ. — Մեծ դրամագլխի տէրեր, որ մեծ քանակութեամբ վաճառք կը գնեն ուղղակի արտադրողէն կամ գործարանատէրէն՝ տակառով, հակով, սնտուկով, պարկով եւն., եւ կը ծախեն նոյնութեամբ կամ ծրարով, տուղինայով եւն:

Վաճառականութիւն. — Commerce, Թիմարէր تجارت

Առեւտրական իրաւագիտութիւն. — Droit commercial, Հուգուգը حقوق تجارت

Վաճառականական գործառնութիւններ. — Opérations commerciales, Մուտամէլարը թիմարիյէ معاملات تجاريہ

Գործարանատէր. — Fabricant, Ֆաբریقە جى فابریکەر

Մեծաքանակ վաճառական. — Négociant en gros, Թօփտանճը طوپدانچى

3. ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ. — Մեծաքանակ վաճառականներէն կը գնեն եւ սպառողին կը ծախեն աւելի փոքր քանակութեամբ, այսինքն հատով, մէթօռվ, կանգունով, քիլով, օխայով եւն.:

4. ՆԱԻԱՅԱՐԴԱՐՆԵՐ. — Նաւ կը վարձեն, ու կը յարդարեն՝ վաճառքի եւ ճամբորդի փոխադրութիւնը կատարելու համար:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐ. — Սովորաբար մեծ դրամագլխով ընկերութիւններ են, որ ծովու, հրդեհի եւ ուրիշ տեսակ վրտանգներու պատասխանատուութիւնը կը ստանձնեն՝ փոխարէն ստանալով նախապէս որոշուած վարձք մը, որ ապահովագին կը կոչուի:

6. ՄԵՂԱՆԱԿԱՌՆԵՐ. — Իբրեւ միջնորդ կը ծառայեն դրամ փոխ առնողներու եւ դրամ փոխ տուողներու միջեւ, այսինքն պատիկ տոկոսով փոխառութիւն եւ բարձր տոկոսով փոխառութիւն կ'ընեն:

7. ՑԱՆՉՆԱԿԱՏԱՐՆԵՐ. — Կը գնեն ու կը ծախեն իբենց անունով, սակայն ուրիշի հաշւոյն, փոխարէն ստանալով կատարուած զործառնութեան գումարին վրայ հարիւրին բան մը՝ որ յանձնառողջէք կը կոչուի:

8. ՄԻՋՆԱՐԴՆԵՐ. — Շատ անզամ կը պատահի որ մէկը բան մը ունի ծախելու եւ գնող կը փնտոէ, եւ կամ, փոխադրաբար, բան մը կ'ուզէ գնել եւ ծախող կը փնտոէ: Արդ, մասնաւոր մարդիկ կան, որոնց զործն է ծախողին գնող եւ գնողին ծախող գտնել, ու անոնց միջեւ համաձայնութիւնը դիւրացնել: Ասոնք միջնորդ կը կոչուին եւ իբենց միջոցաւ կատարուած զործառնութեան գումարին վրայ կը ստանան հարիւրին բան մը՝ որուն միջնորդչեք կ'ըսեն:

2. Վաճառականութեան գլխաւոր ճիւղերը. — Վաճառականութիւնը երեք ճիւղ ունի.

1. — Ճարտարարուես, որ կը կայանայ բնական արտադրութիւնները, ինչպէս քար, ածուխ, երկաթ, փայտ, բամպակ եւն. ծեռք բերելու եւ կամ ծեռք փոխելու մէջ:

Փոքրաքանակ վաճառական. — Marchand en détail, **Բէրաֆենսկայ Միջնորդ.** — Courtier, **Տէլլալ دل** براكنده جى

Նաւայարդար. — Armateur, **Կէմի միւակիզի** كى مجھىزى

Ապահովագրող. — Assureur, **Սիկուրքամը سیغورطە** جى

Սեղանաւոր. — Banquier, **Պանֆէր بانکر**

Յանձնակատար. — Commissionnaire **Քոմիսիونնմը قوميسيون بىچى**

Յանձնառողչէք. — Commission, **Քոմիսիոն قوميسيون**

Միջնորդչէք. — Courtage, **Տէլլալիك دل**

Ճարտարարարուեստ. — Industrie, **Սէնար صنعت**

2. — Բուն Վաճառականութիւն, որ կը կայանայ վաճառքներու փոխանակութեան, առուծախի մէջ:

3. — Սեղանաւորական գործառնութիւններ, այն է զանազան արժէքներու, դրամի, առեւտրական թղթերու, արժէթղթերու (պարտաբուղթ, բաժնեթուղթ) եւն.ի վրայ գործառնութիւններ:

Առաջին եւ երրորդ ճիւղերը մեր նիւթէն դուրս ըլլալով, մենք հոս պիտի խօսինք մասնաւորաբար երկրորդ ճիւղին՝ այսինքն բուն վաճառականութեան վրայ:

3. Բուն Վաճառականութիւն. — Բուն վաճառականութիւնը կը բաժնուի՝

Ա. Վաճառքի քանակութեան տեսակէտով՝ երկուքի.

1. — Մեծաբանակ, այն է զնել ու ծախել մեծ քանակութեամբ, եւ կը կատարուի արտադրողներու եւ մեծաքանակ վաճառողներու միջեւ :

2. — Փոքրաբանակ, այն է մեծ քանակութեամբ զնուած վաճառքները փոքր քանակութեամբ ծախել, եւ կը կատարուի փոքրաբանակ վաճառողներու եւ սպառողներու միջեւ :

Բ. Աշխարհագրական տեսակէտով՝ երկուքի.

1. — Ներքին վաճառականութիւն, որ տեղի կ'ունենայ միեւնոյն երկրին բնակիչներուն մրցեւ:

2. — Արտաքին վաճառականութիւն, որ կը կատարուի օտար երկիրներու միջեւ:

Արտաքրին վաճառականութիւնն ալ կը բաժնուի երեքի.

1. — Ներածումն, այն է օտար երկիրներէ վաճառք բերել:

2. — Արտածումն, այն է օտար երկիրներ վաճառք դրկել:

3. — Թրանզիթ, կը կայանայ երկրէ մը ուրիշ երկիր դրկուած

Բուն Վաճառականութիւն. — Le commerce proprement dit, Le
نَجَارَةٌ تجارت
Մեղանաւորական գործառնութիւններ. — Opérations de Banque,
بنك معاملاتي مبنية على مصالحة

Մեծաքանակ. — En gros, Թوْفِسَانْ طُوبِدَن

Փոքրաբանակ. — En détail, Բերաքիկ گرائے کندہ

Ներքին վաճառականութիւն. — Commerce intérieur, Թիմاٹرէրر
تجارت داخلية

Արտաքրին վաճառականութիւն. — Commerce extérieur, Թիմاٹرէرر
تجارت خارجية

Ներածումն. — Importation, Իشکաچار ادخالات

Արտածումն. — Exportation, Իհրամار اخرجات

Թրանզիթ. — Transit, Թրանزیت ترانزيت

վաճառքները երբորդ երկրէ մը անցընելու մէջ. օրինակի համար, Անգլիայէն Պարսկաստան վաճառք դրկել Թուրքիոյ ճամբով:

4. Վաճառք. — Ամէն ինչ որ կրնայ փոխանակուիլ, զընուիլ ու ծախուիլ այսինքն վաճառականութեան նիւթ ըլլալ՝ վաճառք կը կոչուի:

Վաճառքները կը բաժնուին երեք տեսակի.

1. — Բնական արտադրութիւններ կամ Նախնական նիւթեր, այսինքն ինչ որ նոյնութեամբ կը գտնուի բնութեան մէջ, ինչպէս հանածոյներ (երկաք, Տար, հանճածուիս եւն.), բուսեղէններ (ցորեն, պրտուղ, բամպակ եւն.), կենդանիներ եւ անոնց արտադրութիւնները (կով, ձի, կաթ, բուրդ եւն.):

2. — Ճարտարարուեսական արտադրութիւններ, այն է բնական արտադրութիւնները մարդոց աշխատութեամբ կերպարանափոխուած, ինչպէս (մետենայ, գործիք, կերպաս, պանիր եւն.):

3. — Արժեքներ, այսինքն դրամներ, առեւտրական թուղթեր, արժեքուղթեր:

5. Վաճառքներու կշիռը. — Վաճառքներու մեծագոյն մասը, տեղէ մը ուրիշ տեղ փոխադրուելու համար, անպատճառ պէտք ունին որ եւ է բանի մը մէջ դրուելու, ինչպէս սընտուկի, պարկի, տակառի եւն. մէջ: Այդ գործողութիւնը կը կոչուի պատառում եւ ատկէց յառաջ կուզան վաճառքին զանազան կշիռները, այսինքն՝

1. — Անզուտ կշիռ, որ կը ներկայացնէ թէ՛ վաճառքին եւ թէ՛ պատառին կշիռները միանգամայն:

2. — Զուտ կշիռ, որ բուն վաճառքին կշիռն է՝ առանց պատառին կշիռը հաշուելու:

3. — Ապրայ, որ պատառին կշիռն է եւ որ, աւելնալով զուտ կշրին վրայ, անզուտ կշիռը կուտայ:

6. Վաճառքներու գինը. — Նախնական ժամանակներու մէջ՝ վաճառքները կը փոխանակուէին ուրիշ տեսակ վաճառքներով. այս դրութիւնը կը կոչուէր փոխանակութիւն, եւ կարգ մը դժուարութիւններ եւ անպատեհութիւններ ունէր: Երբ

Վաճառք. — Marchandises, էմրիա أمتئيه

Նախնական նիւթք. — Matières premières, Մէվատը իպրիսահիկ مواد

Ճարտարարուեսական արտադրութիւն. — Produit industriel, Մա-

Արժէք. — Valeur, Քրյմէք قيمة معمولات صناعية սկնահիկ

Պատառում. — Emballage, Անպայաժ أمبالاژ

Անզուտ կշիռ. — Poids brut, Սրգլէքը ղայրի սաֆիկ غير صافية تُقلت

Զուտ կշիռ. — Poids net, Սրգլէքը սաֆիկ صافية تُقلت

Ապրայ. — Tare, Տարս طاره

Փոխանակութիւն. — Troc, Թրամբա طرامب

արծաթն ու ոսկին գտնուեցան եւ դրամը հնարուեցաւ, մարդիկ սկսան վաճառքի փոխարէն դրամ առնել եւ այդ դրամով զնել իրենց պէտք ունեցածները, որով վաճառքներու արժէքը դրամով սահմանուեցաւ: Դրամի այն քանակութիւնը, որ վաճառքի մը արժէքը կը ներկայացնէ, այդ վաճառքին գինը կը կոչուի:

Վաճառք մը Յ տեսակ զին կ'ունենայ. զնման զինը, արժեկզինը
եւ վաճառման զինը (Տես՝ Բաբ. Արքանել Բ-րձ. Ըստ-ը Հ-ը. 82):

7. Վաճառքներու փոխադրութիւնը. — Վաճառականութեան յառաջդիմութեան տեսակէցով՝ փոխադրութիւններն ամէն բանէ աւելի կարեւոր են. վասն զի զնովը վաճառքին որակին եւ զինին հետ մրանգամայն եւ երբեմն անոնցմէ աւելի նկատովութեան կ'առնէ եւ զնած վաճառքը պիտի կրնա՞յ դիւրաւ եւ աժան կերպով փոխադրել: Ասոր համար է որ փոխադրութեան լաւագոյն մրջոցները ունեցող երկիրներու վաճառականութիւնը ամենէն աւելի փայլունն է:

Փոխադրութիւններն երկու զիխաւոր տեսակի կը բաժնուին.

1. — Յամային փոխադրութիւններ, որ կը կատարուին ցամաքի վրայ՝ ծիով, սայլով, երկաթուղիով եւն։ Գետերու վրայ եղած փոխադրութիւններն ալ ցամաքային փոխադրութիւն կը համարուին։

2. — Ծովային փոխադրութիւններ, որ կը կատարուին ծովու վրայ:

Առաջող կը կոչուի այն որ շոգենաւին, երկաթուղիին, սայլապանին, չորեպանին եւն. վաճառք մը կը յանձնէ ուրիշ տեղ մը փոխադրուելու համար:

Հնդունառ կը կոչուի այն որու պիտի յանձնուի այդ վաճառքը:

Փոխադրութեաւն վարձքը կը կոչուի. Փոխադրողէի՞ ցամաքային փոխադրութիւններու համար, եւ նաւողէի՞ ծովային փոխադրութիւններու համար:

Փոխադրութիւնները կը կատարուին ընդհանրապէս շոգենաւային եւ երկաթուղիի ընկերութիւններու, ջորեպաններու, սայլապաններու եւն. միջոցաւ: Կան նաև մասնաւոր անհատներ կամ

Վաճառքներու փոխադրութիւն . — Transport des marchandises,
 Աموال و امتعه نقلیاتی էմվալ ու հմբիս նագլիյարը
 Յամաքային փոխադրութիւն . — Transport terrestre, Նագլիեարը
 Առաքող . — Expéditeur, Միւրսիլ մը պէրիյէ տقلیات իրի
 Ծովային փոխադրութիւն . — Transport maritime, Նագլիյարը
 Փոխադրողչէք — Port, Նագլիյէ نقلیه պահրիյէ قليات بحريه
 Ծնդունող . — Destinataire, Միւրսիլ իլէյի մը ալի Տسل
 Նաւողչէք . — Nolis կամ Frêt, Նավլուն

ընկերութիւններ, որ Փոխադրութեան յանձնառու կը կոչուին եւ
կը ստանձնեն փոխադրութիւններ կատարել:

Փոխադրութիւնը անծախս կը կոչուի, երբ փոխադրողչքը
զրկողին վրայ է, իսկ վճարելի կը կոչուի, երբ ընդունողին վրայ է:

Փոխադրովէքը կը հաշուուի վաճառքի կշիռին, ծաւալին
կամ արժէքին վրայ:

Փոխադրութիւններու առթիւ զրուելիք զըութիւններու զիսաւորներն են.

1. — Փոխադրագիր՝ կառքով, ծիով կամ ջորիով փոխադրութիւններու համար:

2. — Առավման զեկուցագիր եւ Առավման ընկալագիր՝ Երկաթուղիով փոխադրութիւններու համար:

3. — Բեռնագիր՝ ծովալին փոխադրութիւններու համոր:

Այս զրութիւններուն մէջ պէտք է նշանակուած ըլլան
թուականը, դրկուած վաճառքներուն տեսակը, կշիռը, թիւը, նը-
շանագիրը (մարգա), պատառումի եղանակը, (սրնառկ, - տակառ,
պարկ), դրկողին անունն ու տեղը, կառապանին կամ նաւուն ու
նաւապետին անունը, ընդունողին անունն ու հասցէն, պայմա,
նաժամը՝ որու միջոցին փոխադրութիւնը պէտք է կատարուի,
փոխադրողչքին քանակն ու վճարուած ըլլալը կամ ոչ, յապա-
ղումի պարագային պահանջուելիք վնասուց հատուցումը, եւն։
Այս թղթերուն վրայ մէկ վրուշնոց (մաքրու) դրոշմաթուղթ դնելու է։

ԲԵՇՆԱԳԻՐԸ ՄԵՍԱԿ ՄԸ ԸՆԿԱԼՎԳԻՐ է, որով նաւապետ մը կը յայտարարէ ստացած ըլլալ այն վաճառքները, որոնց փոխադրութիւնն ստանձնած է:

Բեռնազիրը կընայ զրուիլ կրողին, որոշեալ անձի մը անունին կամ սովորաբար հրամանին: Պէտք է շինուի չորս օրինակ, նաւապետին, պրկողին, ընդունովին եւ նաւայարդարին համար:

Վաճառում մը Բեռնագրի փոխարկել վճարելի է կ'ըսուի, եթք
ծախողը վաճառքին փոխարժեքը կը ստանայ բեռնազիքը յանձ-
նած ատեն:

Փոխադրութեան յանձնառու. — Entrepreneur de transport, **Նավ-**
լիկ միրքեահիսի نقلیه متعهدی . — **Անծախս.** — Franco **կամ** En port payé, **Կճարելի:** — En port dû.

Անծախս . — Franco կամ En port payé. Վճարելի . — En port dû.
Փոխադրագիր . — Lettre de voiture, نقلیه قائمی گاشیزکاری
Առաքման զեկուցագիր . — Déclaration d'expédition, իրաւաբ

ارسالات بیاننامه‌سی սկյանենամեսի
Առաքման ընկալագիր. — Récépissé, Մազպուղ مقوض
Թէ՛կառեց. — Сопроводительное письмо.

Բեռնագիր . — Connaissement, *Քոնիշիմկլիքօ*
Կրողին. — Au porteur, *Համիշինկ* حاملته

Բեռնազրի փոխարէն վճարելի . — Contre connaissance.

8. Վաճառքներու ժամանումը եւ մաքսատուրք . — Պետութիւններն ալ, անհատներու նման, ծախքեր ունին եւ այդ ծախքերը զոցելու համար զանազան տուրքեր հաստատած են: Այդ տուրքերէն մէկը, եւ կարեւորագոյնն է մաքսատուրք:

Մաքսատուրքը օտար երկիրներէ բերուած կամ օտար երկիր ղըկուած վաճառքներէն առնուած տուրքն է. այդ տուրքը զանգելու համար ամեն երկիր մէջ մասնաւոր վարչութիւն մը կայ, որ Մաքսային վերատեսչութիւն կը կոչուի եւ որուն պաշտօնն է՝

1. — Մաքսատուրքի ենթակայ եղած վաճառքներէն տուրք զանձել:

2. — Մուտքը արգիլուած վաճառքներու մուտքը արգիլել:

3. — Արտածուած ու ներածուած վաճառքներու վիճակագրութիւնը պատրաստել:

Եւրոպական երկիրներու մէջ վաճառքին կշիռին վրայ, իսկ Թուրքիոյ մէջ վաճառքին արժէքին վրայ տուրք ե'առնուի:

Գնահատիչ կոչուող մասնաւոր պաշտօնեաներ մաքսատուն հասած վաճառքները մի առ մի կը քննեն եւ արժէք մը որոշելով՝ այդ արժէքին հարիւրին 11 մաքսատուրք կ'առնեն: Կան սակայն վաճառքներ, որոնց վրայ մաքսատուրք կ'առնուի մասնաւոր թարիֆայի մը համամատ, ինչպէս ուկի, արծաթ, աղամանդ եւն.:

Եթէ վաճառքի արժէքին մասին անհամաժայնութիւն ծագի գնահատիչին եւ վաճառքին տիրոջը միջեւ, տէրը կրնայ մաքսատուրքի փոխարէն վաճառքէն 11 % տալ. այս գործողութիւնը կը կոչուի վաճառքով վճարել:

Թուրքիայէն արտածուած, ինչպէս նաեւ ուրիշ երկրէ մը եկող ու Թուրքիոյ ճամբով ուրիշ երկիր մը զացող բրանգիք վաճառքներէն 1 % մաքսատուրք կ'առնուի:

Թանօրութիւն . — Վերը դրուած մաքսային սակացոյցը կրնայ, ժամանակի շրջանին հետ, փոփոխութիւններու ենթարկուիլ: Այսպէս առաջ ներածումներէն 8 %, եւ ներքին մաքսատուրք անունով թուրիոյ մէկ ժաղացէն ուրիշ մէկ ժաղացը ծովու ճամբով դրկուած վաճառքներէն այ 1 % մաքսատուրք կը գանձուեր. վերը ներածումի մաքսատուրքը 11 % ի բարձրացուեցաւ եւ Սահմանադրութեան վերահաստատութենէն ետքն ալ, ներքին մաքսատուրքը չնշուեցաւ :

Պայմաննեան պատերազմի հետեւանիով, այս միջոցիս կրկին մաքսային սակացոյցը փոխելու մտադրութիւն մը կայ, սակայն տակաւին վերջնական բան մը որոշուած չէ:

**Մաքսատուրք . — Droit de douane, Կռօմրիւկ րէսմի
Մաքսային վերատեսչութիւն . — Administration des douanes, Թու-**

رسومات امانتی կմանկրի սումաթ էմանկա

Գնահատիչ . — Estimateur, Իսրիմաքօր اسٹیمیٽور

Վաճառքով . — En nature, Այնէն նիع

§ II. — ԱՄԵՒՏԻՄԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐ

9. — Վաճառականական ընդհանուր գործառնութիւններու վրայ խօսելէ առաջ, պէտք է խօսինք առեւտրական բուղբերու վրայ, որոնք վաճառքին ու դրամին պէս՝ առեւտուրի էական մէկ տարրը կը կազմոն:

Առեւտրական թուղթ կը կոչուին այն գրութիւնները, որոնց մով յանձն կ'առնուի որոշեալ ատեն մը որոշեալ գումարի մը վը ճարումը: Այս թուղթերը շատ մեծ ծառայութիւններ կը մատուցանեն վաճառականութեան, վասն զի առանց անոնց՝ վաճառականները ստիպուած պիտի ըլլային կանխիկ դրամով միայն գործ տեսնել, ինչ որ զրեթէ անկարելի է. որովհետեւ երբ վարդ գոյութիւն չունենայ, վաճառականութիւն չըլլար:

Ըստ Օսմ. առեւտրական օրէնքի, առեւտրական թղթերն են փոխանակագիրը, հրամանի մուրհակը եւ բնակավայրի մուրհակը:

Զէքը, որու վրայ պիտի խօսինք իր կարգին, սովորութեամբ միայն առեւտրական թուղթ նկատուած է:

1. — ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

10. Փոխանակագիրը, կամ ինչպէս կը գործածուի սովորաբար առեւտուրի մէջ, փոխգիրը՝ առեւտրական թղթերու ամժնէն գրլիաւորն է, որով պահանջառէր մը կը հրամայէ իր պարտապանին որոշեալ պայմանաժամէ մը վերջը որոշեալ գումար մը վճարեէ երրորդ անձի մը հրամանին, որ այն փոխգրին փոխարժէքը տուած է իրեն կամ խոստացած է տալ:

Հետեւաբար՝ փոխգիր մը պատրաստելու համար երեք հոգիի պէտք կայ. ֆաշողը՝ այսինքն այն որ կը հրամայէ վճարել, վճարողը՝ այսինքն այն որու կը հրամայուի վճարել եւ կրողը՝ այսինքն այն որու հրամանին պիտի վճարուի:

Քաշողը այն է որ վճարողէն պահանջք մը կամ անոր քով վարկ մը ունի: Կրողը այն է որ քաշողէն պահանջք մը ունի եւ վճարովն ալ այն է որ պարտք ունի քաշողին: Ըսել է քաշողը մէկուն ունեցած պարտքը կը վճարէ միւսէն ունեցած պահանջքովը:

Առեւտրական թուղթեր . —	Effets de Commerce, Սէնէտաբը թիւ- ֆաշող. — Tireur, Քէշիսկանի كشیده جی	سندات تجاريه آواره
Փոխանակագիր . —	Lettre de change, կամ Traite, Բօլիجա پولیچه	
Հրամանի մուրհակ . —	Billet à ordre, Էմրէ մուհարէրէր սէնէկս	
Պարտապան . —	Débiteur, Մէտենու مدیون (بونو)	امرہ محرر سند
Բնակավայրի մուրհակ . —	Billet à domicile, Իգամէքլեահ սէնէկս	
Պահանջատէր . —	Créancier, Տահի داین	اقامتكاه سندی
Վճարող . —	Tiré, Մուհաթապ مخاطب	چەك
Կրող . —	Porteur կամ Bénéficiaire, Համիլ حامل	

Փոխզրի մը մէջ պէտք է նշանակուած ըլլան.

1. — Քաշուած Խուականը:

2. — Վճարելի գումարը.

Մէյ մը փոխզրին ճակատը՝ Խուանշանով Փ. Վ. (փոխանակագիր վասն . . . B. P. պօն բուր . . .) սկզբնատառերէն ետքը, եւ մէկ մ'ալ բուն իսկ փոխզրին մէջ՝ զիրով:

3. — Վճարման Խուականը (պայմանաժամ) զիրով:

4. — Քաշողին անունը:

5. — Վճարողին անունն ու հասցէն:

6. — Կրողին անունը:

7. — Արժէքը, այսինքն ինչ որ քաշողն ընդունած է կրողէն (արժէքը կանխիկ կամ դրամով կամ վաճառյով ընդունուած կամ ի հաշիւ):

Փոխզրը կրնայ քաշուիլ նոյն իսկ քաշողին հրամանին՝ իւ կամ Մեր հրամանին զրուելով: (Տեսնե՛լ փոխանակագրի օրինակները):

11. Օդինական տրամադրութիւններ. — Օսմ. առեւտրական օրէնքի 70րդ յօդուածին համաձայն, որպէս զի փոխզրը մը օրինաւոր ըլլայ, պէտք է լրացնէ հետեւեալ պայմանները.

1. — **ՏԵՂԵՐՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ.** — Փոխզրը մը պէտք է անպատճառ քաշուած ըլլայ մէկ քաղքէ ուրիշ քաղաքի մը վրայ. այս պայմանին հակառակ քաշուած Խուլութ մը փոխզրը չի նկատուիր եւ փոխզրի: օրէնքներուն ենթակայ չէ:

(Եւրոպական օրէնքները այս պայմանը չնշած են):

2. — **ԹՈՒԱԿԱՆՆԵՐ.** — Ինչպէս ամէն տեսակ զրութիւններու, բայց մմնաւանդ փոխզրերու համար Խուականը մասնաւոր կարեւորութիւն ունի. Խուականն է որ պիտի ցուցնէ թէ քաշողը իրաւունք ունէ՞ր փոխզրը քաշելու, որովհետեւ սնանկ վաճառականը չի կը նար փոխզրը քաշել ցորչափ սնանկ վիճակի մէջ է: Վճարման օրը (վճարօր) զտնելու համար ալ կարեւոր է Խուականը, վասն զի փոխզրը մը կրնայ վճարելի ըլլալ.

Ա. Տեսօրին, այսինքն ներկայացուած օրը:

Բ. Տեսօրէն կամ թուականէն այսչափ օր ետքը:

Գ. Որոշեալ թուականի մը:

Նոյնպէս ժամանցումը (պարտքի մը ըստ օրինի պահանջելի եղած ժամանակամիջոցին անցած ըլլալը) որոշելու համար Խուականը անհրաժեշտ է:

Արժէքը կանխիկ, վաճառքով ընդունուած. — Valeur reçue en espèces, en marchandises, Պէտքի մարկն, նազտեն ախզ օ-
پدلى مالا، نقداً أخذ أولئان լունան

Արժէքն ի հաշիւ. — Valeur en compte, Պէտքի հէսապէն بدلی حساباً، وعده
Պայմանաժամ. — Termé, Վատք

Ժամանցումը 5 տարի է առեւտրական թղթերու համար, այսինքն մինչեւ 5 տարի չի վճարուած առեւտրական թուղթով մը կարելի է մէկուն սնանկութիւնը պահանջել, իսկ 15 տարի՝ սովորական մուրհակներու համար:

3. — ԳՈՒՄԱՐԻՆ ՈՐՈՇԵԱԼ ԸՆԿԱՆ. — Կրողը վճարողէն որոշ գումար մը պէտք է պահանջէ, որպէս զի վէճ չի ծագի: Օրինակի համար՝ երբ քաշողը փոխզրին մէջ ըսէ վճարողին. «Ինձի ունեցած պարտի վճարե Ք.ի հրամանին», այդ թուղթը փոխզրիր ըլլալէ կը դադրի:

4. — ՎՃԱՐՈՂԻՆ ԱՆՈՒՆ. — Եստ որոշակի գրուած ըլլալու է: Այդ անունէն կախում ունի փոխզրին ուրիշներու ծախուելու դիւրութիւնը. անվատահելի անձի մը վրայ քաշուած փոխզրիր մը ոչ ոք կը զնէ: Մէկը իր վրայ փոխզրիր չի կրնար քաշել. այդ կերպ թուղթ մը մուրհակ կ'ըլլայ, քանի որ պարտականն ալ վճարողն ալ ինքն է:

5. — ՊԱՅՄԱՆԱԺԱՄԸ. — Որոշ պէտք է ըլլայ. օրինակի համար այսինչին մահէն ետքը, կամ անձրեւ զալուն եւ կամ անորոշ տեղ մը վճարելի փոխզրիր չըլլար:

6. — ՊԱՏՃԱՌԻ (արժեկիր). — Որոշապէս գրուած ըլլալու և թէ փոխզրը ի՞նչ քանի փոխարէն քաշուած է. «Ինձի համար այսինչին այսչափ դրշ. տուեմ» գրուած թուղթ մը փոխզրիր չի համարուիր:

7. — ԿՐՈՂԻՆ ԱՆՈՒՆ. — Վճարող անձը պէտք է զիտնայ թէ ո՛րու պիտի վճարէ:

8. — ՀՐԱՄԱՆԻՆ. — Փոխզրը դիւրութեան համար հնարուած ըլլալով՝ պէտք է գրուած ըլլայ այսինչին հրամանին, որպէս զի ի հարկին կարելի ըլլայ մէկէն ուրիշին փոխանցուիլ:

9. — ՔԱՇՈՂԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ. — Առանց ստորագրութեան փոխզրիր մը սովորական մուրհակի մը արժէքն ալ չունենար: Այս պարագան այնքան ակներեւ է որ, օրէնքին մէջ չէ յիշուած անգամ: Ըստ օրինի՝ ստորագրութեան եւ անձնական կնիքին (մէօհիւր) միջեւ տարբերութիւն չկայ թէեւ, բայց վաճառականութեան մէջ աւելի ստորագրութիւն կը դնեն, իսկ երբեմն ալ թէ՝ ստորագրութիւն եւ թէ՝ կնիք:

Այս ինը պայմաններէն դուրս կայ նաեւ դրոշմաթուղթի պայմանը: Երաւ է որ առանց դրոշմաթուղթի փոխզրիր մը իր արժէքը չի կորսնցներ, բայց դրոշմաթուղթի օրէնքին 14րդ յօդուածը տուզանք սահմանած է այդ կարգի փոխզրերուն — իւրաքանչիւր 100 զրշ. ին 5 զրշ. — Նոյնպէս կ'ըսէ թէ դրոշմաթուղթ չունեցող կամ պակաս դրոշմաթուղթ կրող փոխզրիր մը առեւտրական օրէնքին 76 եւ 78րդ. յօդուածներով սահմանուած համերաշխութենէն չի կրնար օգտուիլ, այսինքն փոխանցողները (Տե՛ս Հատ. 14 եւ 15)

պատասխանառութենէ կ'ազատին եւ կը մնան միայն քաշողն
ու վճարողը:

12. Փոխարէն. — Այն բանն է զոր քաշողը պէտք է ունենայ
վճարողին քով: Այդ կընայ ըլլալ քաշողին կողմէ վրկուած վաճառք
կամ դրամ, վճարողին վրայ պահանջք, կամ վճարողին կողմէ քա-
շողին հանդէպ բացուած վարկ: Առանց փոխարէնի քաշուած փոխ-
գրերը բացը ժաշուած կը կոչուին: Այս տեսակէն են նաեւ դիւ-
րութեան բուղթ կամ ժաշեմ ժաշես ըսուածները, զոր դրամական
անձկութիւն ունեցող վաճառականներ իրարու վրայ կը քաշեն՝
առանց իրարմէ ո եւ է պահանջք ունենալու, եւ յետոյ զանոնք
սեղանաւորներու զեղչել տալով՝ դրամ կը հայթայթեն քիչ մը ա-
տենի համար:

Փոխարէնին զրկուելէն յառաջ զալիք ամէն պատասխանա-
ռութիւն քաշողին կը պատկանի: Փոխզիր մը քաշուած ատեն
փոխարէնը վրկել անհրաժեշտ պայման չէ, կը բաւէ որ վճարօրին
վրկուած, այսինքն վճարողին ձեռքը հասած ըլլայ:

13. Ընդունելութիւն. — Այն զրութիւնն է, որով վճարողը
իր ստորագրութեամբը յանձն կ'առնէ նշանակեալ զումարը որոշեալ
պայմանաժամին վճարել: Ընդունելութիւնը փոխզրին վրայ շեղակի
յաճախ կարմիր մելանով, ընդունուած է զրելով, թուականը դնե-
լով եւ ստորագրելով կ'ըլլայ: Փոխզիր մը մինչեւ որ վճարողին
կողմէ ընդունուի՝ իրական արժէք մը չունենար, եւ ընդունուած
փոխզիր մը շատ աւելի դիւրաւ կընայ ձեռքէ ձեռք անցնիլ: Ընդու-
նելութիւնը կընայ կատարել տալ քաշողը կամ կրողը եւ կամ փո-
խանցողները: Վճարողը պարտաւոր է ընդունիլ՝ եթէ փոխարէնն
արդէն ստացած է, միայն կընայ ընդունելէ առաջ 24 ժամ սպաս-
ցնել՝ քաշողին հաշիւը քննելու համար: Բայց փոխզիր մը ընդու-
նիլ չի նշանակեր եթէ վճարալն անոր փոխարէնն անպատճառ
ստուցած է, որովհետեւ քաշողին պատիւը յարգած ըլլալու համար
կընայ ընդունած ըլլալ, որով ամէն ատեն կընայ փոխարէնը պա-
հանջել քաշողէն, պայմանաւ որ կարենայ հաստատել եթէ չէ ստա-
ցած. բայց ընդունած ըլլալու հետեւանքը սա է որ, պայմանաժա-
մին պէտք է վճարէ այդ փոխզիրը եւ յետոյ ինքը դիմէ քաշողին:

14. Փոխանցում. — Փոխանակագրի կրողը, շատ անզամ
դրամի պէտք ունենալով՝ չի կընար մինչեւ վճարօրը սպասել, եւ
փոխանակագրութիւնը ուրիշի մը տալով, այսինքն այդ փոխանակագրին
վրայ ունեցած իր իրաւունքը ուրիշի մը փոխանցելով, դրամ
կառնէ. այս զործողութիւնը կը կոչուի փոխանցում: Փոխանցումը

Համերաշխութիւն. — Solidarité, Քէֆալէքի միւրէսէլսիլէ گفالت

Փոխանցում. — Endossement, ڏڀرو جير و متسلسله

Փոխարէն. — Provision, ڦاڳڻڻلڻد قارشولق

Ընդունելութիւն. — Acceptation, ڦاڳونيل قبول چکمك

Բացը քաշել. — Tirer à découvert, ڦاڳڻڻسوند ڙڪسڪ

Դիւրութեան Թուղթ. — Effet de complaisance.

կատարութ կը կոչուի փոխանցող, իսկ այն որու հրամանին կը փոխանցուի՝ ստացող:

Փոխանցումը կը կատարուի փոխգրին ետին գրելով ինչ որ կը տեսնուի. օրինակին մէջ: Հետեւաբար փոխանցում մը ըստ օրինի կատարեալ ըլլալու համար՝ հարկաւոր է.— 1^o Թուականը.— 2^o Փոխգրին արժէքը ի՞նչ ծեւով ստացուած ըլլալը. — 3^o Անունը այն անձին՝ որուն հրամանին կը փոխանցուի. — 4^o. Փոխանցողին ստորագրութիւնը:

Ստացողն ալ, իր կարգին, կրնայ, եթէ պէտք ունենայ, միեւնոյն ծեւով ուրիշին փոխանցել նոյն փոխգիրը եւ այսպէս յաջորդաբար: Եթէ փոխանցողներն այնքան շատ ըլլան որ, փոխգրին ետին տեղ չի մնայ գրելու, ուրիշ թուղթ մը կը փակցնեն, որ երկայնորդ կը կոչուի եւ փոխանցումները կը շարունակուին անոր վրայ:

Փոխանցումը փոխգրերու յատուկ զործողութիւն մը չէ. ամէն թուղթ որ հրամանի գրուած է՝ կրնայ ուրիշին փոխանցուիլ միեւնոյն պայմաններով: Օրինակի համար՝ հրամանի գրուած բեռնսգրի մը տէրն ալ կրնայ միեւնոյն կերպով զայն փոխանցել ուրիշին, այդ վաճառքներուն վրայ իր ունեցած իրաւունքը անոր թողլով:

15. Համերաշխութիւն. — Կը նշանակէ այն պատասխանատութիւնը զոր քաշողը, ընդունողը, փոխանցողները կը ստանձնեն հաւասարսպէս վերջին ստացողին հանդէպ, որ կ'ըլլայ իրական կրողը, այսինքն այս վերջինը իրաւունք ունի անոնց դիմելով վճարումը պահանջել՝ եթէ վճարողը չի վճարէ, պայմանաւ որ սակայն ժամանակին բոլոքած ըլլայ (Տես՝ Հատ. 22):

Փոխանցող մը, հետեւաբար, պատասխանատու է իրմէ ետքի փոխանցողներուն հանդէպ, իսկ իրմէ առջի փոխանցողներն իրեն պատասխանատու են:

16. — Փոխանակագրին առաջին օրինակէն զատ՝ կարելի է շինել 2րդ եւ 3րդ օրինակներն ալ, առաջինին կորսուելու պարագային՝ միւսները զործածելու համար: Ասկից զատ, երբ առաջինը ընդունելութեան դրկուած է, երկրորդը՝ արդէն կը ծախուի առանց առաջինին զալուն սպասելու. յետոյ զնողը երկրորդը ներկայացնելով՝ կը ստանայ առաջինը, որ ընդունուած եւ վերադարձուած կ'ըլլայ:

Ինչպէս օրինակներուն մէջ ալ կը տեսնուի, փոխանակագրերու այս երեք օրինակներէն իւրաքանչիւրին վրայ պէտք է զրել.

Փոխանցող. — Cédant, ڏهرانه

Ստացող. — Cessionnaire, Մէֆրուղուն իլեյի مفروع الـ

Երկայնորդ. — Allonge, Ալոնդ ڙو

Տեսօրին. — A vue կամ A présentation, Իրայիսիմսէ ارایه سند

Հրամանին. — A l'ordre, Էմրինէ امرینه

Վճարօր. — Echéance, Հուլուղի վատէ حلول وعده

Առաջինին վրայ. «Երկրորդն ու երրորդը ոչ գոլով»:
Երկրորդին վրայ. «Առաջինը եւ երրորդը ոչ գոլով»:
Երրորդին վրայ. «Առաջինը եւ երկրորդը ոչ գոլով»:

17. — **Փոխզրերն ու հրամանի մուրհակները հետեւեալ համեմատական դրոշմակուլթերուն ենթակայ են.**

1 էն մինչեւ	100 դր.	10 դր.
101 » » 1 000 »		20 »
1 001 » » 2 000 »		40 »
2 001 » » 10 000 » իւրաքանչյւր 2 000 ի համար	40	»
10 001 » » 100 000 » » 5 000 » » 2 1/2 դր.	2 1/2 դր.	
100 000 » վեր	» 10 000 » » 5 »	5 »

2. — ՀՐԱՄԱՆԻ ՄՈՒՐՃԱԿ

18. — Հրամանի մուրհակը այն առեւտրական թուղթն է, որով անձ մը յանձն կ'առնէ որոշեալ թուականի մը երկրորդ անձի մը հրամանին վճարել որոշ գումար մը, որու փոխարէնը ի՞նչ կերպով (դրամով, վաճառքով եւն.) ստացած ըլլալը կը յայտնէ (Տեսնե՛լ օրինակները):

Հրամանի մուրհակը անով կը տարբերի փոխզրէն որ, պարտականն ու վճարովը միեւնոյն անձն է, մինչդեռ փոխզրին մէջ երրորդ մըն է որ կը վճարէ:

Փոխանցումի եւ համերաշխութեան համար ի՞նչ որ ըսուեցաւ փոխզրի մասին, նոյնն են նաեւ հրամանի մուրհակին համար:

Հրամանի Մուրիակի Օրինակներ

Կ. Պոլիս, 1/14 Յունիս 1913

Լ. Օսմ. 150

Թուականէս երեսուն եւ մեկ օր վերջ պարտիմ վճարել Աստուր էֆ. Մանեասեանի հրամանին միմիայն Հարիւր Յիսուն Օսմանեան Ռակի, փոխարէնը ապրանք լնդունած էմ:

Կ. Պոլիս	1/14 Յունիս	1913
----------	-------------	------

7 1/2 Դր.

Թիւ 235

Հասցէ

Պոլիս, Այնալը խան, թիւ 7.

Տիգրան Գաբրիմանեան

Constantinople le 14 Juin 1913.

B. P. Ltq. 75,25.

Au vingt Septembre prochain, je paierai à l'ordre de Monsieur K. Mansukian, la somme de **Livres Turques Soixante Quinze et 25/100**, valeur reçue en marchandises.

Constantinople le 14 Juin 1913

Nº 37

Timbre
Ps. 4

M. Torossian

M. Torossian

65. Sultan Hamam, Cons/ple.

لرای عثمانی

10.

بالکن بوزالی عدد لیرای عثمانی در

تار بخوبیه آلتنه بر کوهه صدره فرهوه ناچه ای آرتین افسنی
پایاز باهه امریمه بروجه باهه بالکز بوز الی عدد امیر ای عثمانی
تا دهه ایده جکم بدلی ماله مفبوده صنم او لشند

۱۴ حزیران سنہ ۱۳۲۹

دروس عادت جامی خانده ۲۵ نوامبر وده

نومرو ۱۲۳

محمد توفیق

Յ. — ԶԵՐ

19. — ԶԵՐԸ զրութիւն մըն է, որով մէկը ամբողջութեամբ կամ մասամբ ետ կ'առնէ, հրապարակի լեզուով՝ կը յաշէ ուրիշի մը քով ունեցած դրամը:

Որովհետեւ սովորաբար սեղանաւորներու կամ դրամատուններու մօտ դրամ կը ծգուի՝ տոկոսով կամ առանց տոկոսի, հետեւաբար չէրը կարելի է նաեւ սապէս սահմանել.

Վճարելու հրաման մը, զոր անձ մը կուտայ այն սեղանաւորին կամ դրամատան, որու քով տրամադրելի դրամ ունի:

Վճարելու հրաման տուողը՝ յաշող, հրամանը ո՛րու որ տրուած է՝ վճարող եւ այն որ դրամը պիտի ստանայ՝ կրող կամ ստացող կը կոչուին:

Ինչպէս կը տեսնուի օրինակէն՝ չէրի մը մէջ պէտք է զրուած ըլլայ թուականը (սովորաբար գիրով), վճարողին ու կրողին անունները, վճարելի զումարը (թիւով ու գրով) եւ յետոյ, բնականաբար, քաշողին ստորագրութիւնը:

ԶԵՐԸ կը ներկայացնովին, կրողին կամ ներկայացնովին, որոշեալ անձի մը, եւ կամ որոշեալ անձի մը հրամանին:

Միայն հրամանի զրուած չէրեքն են որ կը ներկայացնուիլ փոխզրերու նման:

ԶԵՐԸ վճարելի է տեսօրին, այսինքն ներկայացնուելուն պէս գումարը ի՞նչ որ ալ ըլլայ, 20 փարանոց դրոշմաթուղթ մը պէտք է փակցուի: Օտար երկրէ մը քաշուած չէրերն ալ ենթակայ են նոյն 20 փարայի դրոշմաթուղթին, զոր թուրքիոյ մէջ կը վճարէ առաջին զործածողը: ԶԵՐԻ մը զանձուած ըլլալը յայտարարելու համար դրամ ստացողը չէրին ետին «Վասն ստացման» զրելէ վերջ, թուական կը դնէ ու կը ստորագրէ: Արդէն բոլոր առեւտրական թուլթերն ալ միեւնոյն կերպով կը զանձուին:

ԶԵՐԻ ՕՐԻՆԱԿԻՆԵՐ

Տասը Մայիս 1913, Կարին

Լ. 0սմ. 300. —

Գարակեօքեան Եղբարք

Կ. Պոլիս

Վճարեցէք Գարեգին հք. Աղամեանի հրամանին Երեք
Հարիւր Օսմանեան Ռոկի:

Գ. Խելքակեան

Դրա վայրութեան մասին
20 դրամ

« ፳፻፲፭ የፃዕስ ማኅበር ተፃፀጭ አንቀጽ ፩፭

Constantinople le

19/3 May 1873



Banque Commerciale Ottomane D

Payez à la banque ottomane
Tabagies des Montees itenem
la somme de cinq francs et 75 centimes.

la somme de cinq francs et 75 centimes.

N° 1755

NEW YORK NEW YORK



K. Serkisoff & Cie 5231

لیرای عثمانی ۳۰

در سعادت بازه اوت نو ماهه

حسین حسنه افندی امریمه اوت نوز عربه ایرانی تا دیه ایدیکن

۱۳۲۹ حزیران سنه

علی حیدر

پاره لق مقطوع پول ۲۰

20. Օրինական ծանօթութիւններ. — Օսմ. առեւտրական օրէնքին մէջ չէքի մասին ո եւ է ծանօթութիւն չկայ, եւ ինչպէս ըսինք, սովորութեամբ է միայն որ իբր առեւտրական թուղթ ընդունուած է, որովհետեւ վաճառականները, դրամատունները եւ նոյն իսկ կառավարական զանձը չէքը իբրեւ վճարման միջոց ընդունած են: Միայն դրոշմաթուղթի օրէնքն է որ չէքի մասին կը խօսի, երբ կ'ըսէ թէ չէքերուն 20 փարայի դրոշմաթուղթ պէտք է փակցնել:

Չէքի մը փոխարէնը պէտք է պատրաստ քլայ, կամ քաշողը վճարողին քով վարկ մը ունենալու է: Առանց փոխարէնի չէք քաշելուն քացը բաշել կ'ըսեն:

Չէք մը պէտք է ներկայացուի եւ զանձումը պահանջուի քաշուած թուականէն մինչեւ հինգ օր՝ (բաշուած օրն ալ հաշուելով) եթէ միեւնոյն քաղքին մէջ վճարելի է, իսկ մինչեւ ութ օր, եթէ տարբեր քաղքի մէջ վճարելի է: Սակայն այս տրամադրութիւնը գրեթէ բնաւ նկատի չառնուիր, մանաւանդ տարբեր քաղքի վրայ քաշուած չէքերու համար:

Հրամանի քաշուած չէքի մը վրայ ստորագրութիւն ունեցողներն ալ հաւասարապէս պատասխանատու են վճարման համար. բայց եթէ սոյն հինգ կամ ութ օրերն անցնին, միայն քաշողը պատասխանատու կը մնայ:

4. — ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՈՒՐՃԱԿ

21. — Բնակավայրի մուրհակը պարզ հրամանի մուրհակ մը է, միայն թէ պարտականը յանձն կ'առնէ այդ գումարը վճարել ուրիշ տեղ մը, մինչդեռ հրամանի մուրհակը վճարելի է ստորագրուած տեղոյն մէջ, եւ փոխգրէ մը անով կը տարբերի որ, ստորագրողն ու վճարողը միեւնոյն անձն է:

Բնակավայրի մուրհակն ալ հրամանի կը շինուի եւ ենթարկուած է միեւնոյն օրինական տրամադրութիւններուն:

Վասն ստացման . — Pour acquit, Մաժառուղը օլմը ըլր մقبوض اولشدر

ԲՈՂՈՔՈՒՄ

22. — Առեւտրական թուղթ մը (չէի, փոխանակագիր, մուրհակ եւն.) բողոքել՝ կը նշանակէ այդ թղթին ընդունուիլը կամ վճարուիլը պաշտօնապէս հաստատելով՝ իմացնել պարտական կամ պատասխանատու անձին կամ անձերուն թէ դրամը ծախքերով եւ վնասներով միասին պիտի պահանջուի:

Առեւտրական թուղթ մը երկու պատճառով կը բողոքուի.

1. — Զընդունուելուն համար (փոխանակագիրներուն յատուկ):
2. — Զվճարուելուն համար (բոլոր առեւտրական թղթերուն յատուկ):

Վճարումը մերժուած թուղթ մը պէտք է բողոքել վճարորէն մինչեւ 24 ժամ. հակառակ պարագային բոլոր փոխանցողները պատասխանատուութենէ կ'ազատին եւ միայն քաշողն ու վերջին կը դը կը մնան դէմ առ դէմ:

Եթի ընդունելութեան համար թուղթ մը ներկայացուի եւ վճարողը գումարին մէկ մասին համար միայն ընդունի, մնացորդին համար պէտք է բողոքել:

Բողոքումի գործողութիւնները կը կատարուին նօսարներու միջոցով, իսկ նօտար չի գտնուած տեղերը՝ դատարանին աւագ քարտուղարներուն ծեռքով։ Ուրիշ կերպով եղած բողոքումները, ինչպէս նամակով, բերանացի, երրորդի մը միջոցով եւայլն ո եւէ օրինական կարեւորութրւն չունին:

§ III. — ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

23. — Վաճառականին զլիսաւոր գործառնութիւններն են.

1. — Գնում եւ վաճառում զանազան վաճառքներու:
2. — Հայթայթիչներուն ունեցած պարտքերուն վճարումը, եւ յանախորդներէն ունեցած պահանջքներուն զանձումը:
3. — Վերոյիշեալ զանազան գործառնութիւնները հաստատող գրութիւններու պատրաստութիւնը:

ԳՆՈՒՄ-ՎԱՃԱՌՈՒՄ

24. — Գնում-վաճառումը այն կրկին գործողութիւնն է, որով անձ մը, այն է վաճառողը, յանձն կ'առնէ այսինչ վաճառքը յանձնողոքում, բողոքել. — Protêt, protester, بروتكارو روتسو.

Զընդունուելուն համար. — Faute d'acceptation, عذرخواهی اسکارمْ զապուچ عدم قبول پروتستوسی.

Վաճառուող. — Vendeur, صاحب مال pro-prietary.

Նօտար. — Notaire, عذری اسکارجی اسکارجی مقاولات عمری.

Գնում-վաճառում. — Achat-Vente, اخذ واعطاً.

նել անծի մը, այն է գնողին, որ անոր փոխարժէքը կը վճարէ կամ կը խոստանայ վճարել։ Հետեւաբար ինչ որ մէկուն համար գնում է, միւսին համար վաճառում է, եւ փոխադարձաբար։

Երկու տեսակ գնում եւ վաճառում կայ։

1. — Ուղղակի գնում-վաճառում, զոր վաճառականը ինքը կը կատարէ ուղղակի եւ իր հաշւոյն։

2. — Անուղղակի գնում-վաճառում, զոր յանձնակատարը կը կատարէ երկրորդի մը հաշւոյն։

Ուղղակի գնում-վաճառումը կը պարունակէ։

1. — Գնողին ապացրանքը կամ յանձնարարութիւնը, որ երկու կերպով կ'ըլլայ։

Ա. Բերանացի՝ երբ գնողն ու ծախողը միեւնոյն հրապարակի վրայ են, եւ երբ մանաւանդ խնդիրը փոքր քանակութեան վրայ է։

Բ. Գրաւոր՝ երբ գնողն ու ծախողը տարբեր տեղեր են եւ կամ երբ խնդիրը մեծ քանակութեան վրայ է։

Գրաւոր յանձնարարութիւնը պէտք է պարունակէ՝ վաճառքին առեսակը, քանակութիւնն ու զինը, պատաստումի եւ առաքման եղանակը, յանձնումի ժամանակն ու տեղը, վճարման եղանակը։

2. — Վաճառողին կողմէ վաճառքներուն յանձնումը։

3. — Գնողին կողմէ վաճառքներուն ընդունելութիւնը։

4. — Գնողին կողմէ արժէզինին եւ վաճառման զինին որոշումը։

25. Վաճառքներաւ Յանձնումը. — Վաճառողը, երբ յանձնարարութիւն մը ընդունի, կը սկսի զայն զործադրել եւ վաճառքները յանձնել կամ զրկել գնուին՝ նախապէս որոշուած պայմաններով։ յետոյ կը պատրաստէ հաշուեցուցակը, այսինքն յանձնուած կամ զրկուած վաճառքներուն մանրամասն մէկ հաշիւը, որ պէտք է ցուցնէ։

Գործողութեան Թուականը — Ծախողին անունն ու հասցէն (ընդհանրապէս տպագրուած) — Գնողին անունն ու հասցէն եւ ՊԱՐՏԻ բառը (նոյնպէս սովորաբար տպուած) — Առաքման եղանակը — Վճարման ժամանակը — Զեղչին քանակը (եթէ կայ) — Վաճառքին տեսակը — Հակին, սնտուկին եւն, կշիւը, թիւը, մարգան,

Գնող. — Acheteur, Միշتى گەرەبىھى.

Ուղղակի գնում-վաճառում. — Achat-vente direct. Պիچا ۋەسەپىشى
بلا واسطه اخذ واعطا

Անուղղակի գնում-վաճառում. — Achat-vente indirect, Պիچا
وەسەپىشى اخذ واعطا

Ապսպրանք. — Commande, Սېارش سارش

Յանձնում. — Livraison, Թەئىلەم تسلیع

Մնղունելութիւն. — Réception, Թەئىلەم تسلیع

Հաշուեցուցاک. — Facture, ۋەرپىرە فاطوره

— Վաճառքին միութեան զինը (մերին, հատին, փլոյին եւն.) — Ընդհանուր զինը — Փոխադրութեան ծախքերը (եթէ զնողին վրայ էն), եւ վերջապէս զուտ փոխարժէքը:

Հաշուեցուցակները երկու տեսակ են.

Ա. Գևորգի Հաշուեցուցակ եւ Բ. Վահանակ Հաշուեցուցակ:

Հաշուեցուցակները ենթակայ են 5 փարանոց դրոշմաթուղթի:
Երբ փոխարժէքը վճարուի, ծախողը պէտք է 20 փարանոց դրոշմա-
թուղթի մը վրայ «Վասն ստացման» զբելով ստորագրէ:

Ծախողը վաճառքին դրկուած ըլլալը կը ծանուցանէ զնողին
մասնաւոր նամակով մը, որ առայման ծանուցագիր կը կոչուի եւ
որու հետ միասին կը դրկուի նաեւ ընդհանրապէս հաշուեգուզակը:

Գնողն ալ իր կարգին վաճառքներուն ժամանումը, հաշուեցուցակին համաձայն ըլլալը եւ փոխարժէքին զրկողին պահանջքին արծանազրուած ըլլալը (Տե՛ս Տոմարակալութիւն) կը ծանուցանէ նամակով մը, որ ընդունելութեան ծանուցագիր կը կոչուի:

26. Անուղղակի Գնում-Վաճառում . — Անուղղակի գնում-Վաճառումի մը համար՝ պէտք է պատրաստել հետեւեալ զրութիւնները.

4. — Գնողին ապացրանք:

2. — Հաշուեցիր զննան, զոր կը պատրաստէ զնող յանձնակատը:

3. — Հաշուեցիր վաճառման, զոր կը պատրաստէ ծախող յանձնակատարութ:

4. — Հաշուեցիր ծախուց եւ փոխադրութեան, զոր կը պատրաստէ փոխադրութեան յանձնակատարը:

Հաշուեզիրերն ալ զըեթէ հաշուեցուցակներու յար եւ նման կը պատրաստուին, միայն յանձնակատարը կ'աւելցնէ այդ առթիւ իր ըրած ծախքերը, իր յանձնառողջէքը, տուած միջնորդչէքը, եւն.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌԵՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

ԿԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

27. — Գնուած վաճառքի մը փոխարէնը երբ դրամով տրուի կը կոչուի վճարում, իսկ երբ մուրհակով կամ փոխանակազրով տըրուի, կը կոչուի կարգադրութիւն:

Վճարումի եղանակին տեսակէտով՝ զնումը երեք տեսակ է,

Առաքման ծանուցագիր.— Avis d'expédition.

Ընդունելու թեան ծանուցազիր. — Accusé de réception.

Հաշուեղիք զնման, վաճառման. — Compte d'achat, de vente.

Վճարում: — Paiement, *թէ՛շյաբ*

Կարգադրութիւն. — Réglement, Թհական Հայաստան

1. — Կանխիկ գնում, երբ վաճառքին փոխարժէքը կը վճարուի յանձնումի ատեն կամ շատ կարճ պայմանաժամէ մը ետքը. Պոլոյ մէջ մինչեւ 30 օր եղած վճարումները կանխիկ կը նկատուին, իսկ եթէ գնուած վայրկեանին վճարուի՝ անմիջական կանխիկ կը կոչուի:

2. — Ապառիկ գնում, երբ վաճառքին փոխարժէքը կը վճարուի որոշեալ պայմանաժամէ մը ետքը:

3. — Ի հաշիւ գնում, երբ գնողն ու ծախողը փոխադարձաբար իրարու հաշոյն կ'անցընեն իրարմէ գնած վաճառքներու փոխարժէքը: Այս կերպը տեղի կ'ունենայ այն վաճառականներուն միջեւ, որ յաճախակի գործ ունին իրարու հետ, եւ երբեմն երբեմն, սովորաբար մէկ երկու ամիսն անզամ մը, իրարու հետ հաշիւ կը տեսնեն եւ պարտքերուն տարբերութիւնը միայն կ'առնեն կամ կուտան:

28. Կանխիկ Գնումներ. — Կանխիկ գնումները կը կարգադրուին զիսաւորաբար երեք կերպով.

1. — Հնչուն դրամով: 2. — Չեմով: 3. — Հաշուական ինխանցումով:

Մէկ քաղքէ ուրիշ քաղաք հնչուն դրամով եղած կանխիկ վճարումները կը կատարուին փոսթայի միջոցով՝ յանձնաւարեալ նամակով, արժեքը յայտարարուած նամակով, թղթատարական վճարագիրով եւ կամ ծրարով:

Յանձնաբարեալ նամակի համար, Թղթատարական սովորական վարժքէն զատ, յաւելուածական 1 լրշ. կը վճարուի, այս կարգի նամակ մը կորսուելու պարագային՝ Թղթատարութիւնը 1 ոսկի կը վճարէ Թուրքիոյ համար, իսկ 50 ֆրանք՝ արտսսահմանի համար:

Արժէքը յայտարարուած նամակի մը համար՝ յանձնաբարեալ նամակի մը վարժքը վճարուելէ զատ՝ յայտարարուած զումարին իւրաքանչիւր 1 000 լրուշին 1 լրուշ համեմատական տուրք մը կը վճարուի, եւ կորսուելու պարագային՝ Թղթատարութիւնը յայտարարուած զումարը կը վճարէ ամբողջովին: Մէկ նամակի համար առ առաւելն 50 հազար լրուշ կարելի է յայտարարել:

Թղթատարական վճարագիրը վճարման այն միջոցն է, որով տեղի մը նամակատան յանձնուած դրամ մը ուրիշ նամակատունէ մը կ'առնուի: Իւրաքանչիւր Թղթատարական վճարագիր 2 000 լրուշէն աւելի չի կրնար ըլլալ: Սոյն վճարագրերու վարժքն է՝ մինչեւ

Կանխիկ. — Au comptant, بیشین

Անմիջական կանխիկ. — Comptant compté.

Ապառիկ. — à terme կամ à crédit, Վերէսէիյէك ویره سید

Ի հաշիւ. — En compte, Մահառական محسوب

Հնչուն դրամով. — En espèces, Նազէկ نقداً

Յանձնաբարեալ նամակ. — Lettre recommandée, Թահիւսի մէժ-Ծրար. — Group, Կրուր غروپ

Արժէքը յայտարարուած նամակ. — Lettre chargée կամ à valeur

declarée, Գլյմէքը մուգատէրէլի մէքրուաج قيمت مقدارهلى مكتوب

500 դրուշ, մէն մի 100 դրուշին 20 փարայ. 500էն 700' 3 դրուշ,
իսկ անկից վեր՝ ամէն մէկ 200 դրուշին 20 փարայ:

Ծրարը դրամ պարունակող կապոց մըն է, որ թղթատարութեան միջոցով կը զբկուի՝ իր ծանրութեան համեմատ վարձք մը վճարելով եւ զոր զբկողը սովորաբար կ'ապահովագրէ:

Թղթատարութեան միջոցով կատարուած բոլոր այս առաքումները թէ՛ շատ ծախքերու եւ թէ՛ դժուարութիւններու կը կարօտին եւ այդ պատճառով փոքր զումարներու միայն կը յարմարին: Մեծ զումարներու վճարման յարմարագոյն եղանակն է չէլլը:

29. Հաշուական փոխանցում. — Հաշուական փոխանցումը այն զործողութիւնն է, որով մէկը — սովորաբար սեղանաւոր մը կամ դրամատուն մը — իր քով հաշիւ ունեցող երկու յաճախորդներէ մէկուն հաշուէն որ եւ է զումար մը միւսին հաշւոյն կը փոխանցէ, որով մին միւսին վճարում մը ըրած կ'ըլլայ (Տե՛ս Տոմարակալութիւն):

Այս կերպով ամէն օր մեծագումար առեւտրական զործառնութիւններ կը կատարուին՝ առանց նոյն իսկ 10 փարայ շրջաբերելու:

30. Ապառիկ զնումներ. — Ապառիկ զնումները կը կարգադրուին երկու եղանակով.

1. — **Փոխանակագրով՝** եթէ զնողն ու վաճառողը տարբեր հրապարակներու վրայ են:

2. — **Հրամանի մուրհակով՝** եթէ միեւնոյն հրապարակի վրայ են:

Փոխանակագրի եւ հրամանի մուրհակի վրայ իրենց կարգին մանրամասնօրէն խօսած ըլլալով, հոս միայն սա կ'աւելցնենք թէ, վաճառական մը երբ իր ստացած մէկ վաճառքին փոխանակագիր մը կամ մուրհակ մը կը ստորագրէ, այդ վաճառքին փոխարժէքը վճարած կը համարուի այլ եւս, միայն պարուաւոր է պայմանաժամին որոշեալ զումարը վճարել իր ստորագրութիւնը ներկայացնողին:

ԱՌԵՒՏԲԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒԹԻՒՆԵՐՈՒ ԿԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

31. — Ամէն վճարում եւ կարգադրութիւն պէտք է հաստատուի ապացուցիչ քուղբով մը:

32. Ստացագիր. — Ստացագիրը այն թուղթն է, որով մէկը կը յայտարարէ ո եւ է զումար մը ստացած ըլլալ:

Ստացագիրները կրնան ըլլալ առանձինն մասնաւոր թղթի վրայ

Հաշուական փոխանցում. — Virement, նագալ հէսապ نقل حساب

Ապացուցիչ թուղթ. — Pièces justificatives, էվրագը միւսպիք

Վտացագիր. — Recu, Մահպուղ مقبوض

اوراق مشتبه

Եւ կամ պարզապէս հաշուեցուցակներուն տակ ստացողին ստորագրութեամբ, ինչպէս նաեւ նախակով եւայն։
Ամեն ստացագիր 20 ֆրոնց. (մայթու) դրոշմաթուղթ կը ելու է։

Ստացագրի Օրինակներ

L. Օսմ. 150. —

Ստացայ Պետրոս հք. Ասրունիկ Հարիւր Յիսուս Օսմանեան
Ասկի ի հաշիւ Անտոն հք. Մուրատեանի ի Կարին։

Կ. Պոլիս, 1/14 Յունիս 1913

Թ. Գ. Էկորգեան

Դրա լուսաւորութեան
20 դրամ

L. Ը. 100 $\frac{3}{4}$

Reçu de Mr. H. Karagueuzian la somme de Cent Livres Turques
et 75|100, pour solde de ma facture du 15 Juin 1913.

Constantinople, le 30 Juin 1913

M. Manoukian

Timbre fixe 20 Paras

يالكز ٧٥٠ غروشدر

۲۳ مایس ۱۳۲۹ ناربختی فاطوره محسوبأ قرهوه تاھرى
اسماعيل افندىچى بىرەم بارى بىزى بوزاللى غروسى اھمىز اېلىم
۱۳۲۹ حىزبان سنه ۱۵

آصادوريان

۲۰ پار. لک مقطوع پول

§ IV. — ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ

33. — Սնանկանալ — բառական իմաստով — կը նշանակէ ունեցածը հատցնել: Ըստ առեւտրական օրէնքի, վաճառական մը սնանկացած է, եթք անկարող է իր առեւտրական պարտքը պայմանաժամին վճարել — անծնական կամ տնական պարտքերը առեւտրական գործառնութիւններէ ծագած չեն նկատուիր: Հետեւաբար վաճառական մը, որ հազար ոսկի դրամագլուխ մը ունի, կը նայ սնանկ նկատուիլ՝ եթէ իր 5 ոսկիի մէկ պարտքը չի վճարէ կամ չկարենայ վճարել, ինչպէս որ միայն 5 ոսկի դրամագլուխ ունեցող վաճառական մը սնանկ չի նկատուիր, եթք յաջողի իր հազար ոսկիի պարտքերը կանոնաւորաբար վճարել:

Սնանկութիւնը երեք տեսակ է.

1. — **Պարզ սնանկութիւն.** — Եթք մէկը կը սնանկանայ իր կամքէն անկախ պատճառներով, տնտեսական տագնապի մը, զիներու յանկարծական անկումի մը, առեւտրական մեծամեծ կորուստներու հետեւանքով եւն: Այս կերպ սնանկութիւն մը ո եւ է պատիժ չունի:

2. — **Թերութեամբ կամ Անհոգութեամբ Սնանկութիւն.** — Եթէ վաճառականը սնանկանայ իր թերութեան կամ անհոգութեան պատճառով, օրինակի համար կանոնաւոր տոմարներ չի բռնելուն, յանդուզն շահաղիտութիւններու ծեռնամուխ ըլլալուն, շոայլ ծախսեր ընելուն եւայլն համար. պատիժը բանտարկութիւն է:

3. — **Խարդախ Սնանկութիւն.** — Եթք վաճառականը կեղծ տետրակներ շինէ, ունեցածը մասամբ կամ ամբողջովին պահէ, դիտմամբ պարտքը աւելի ցոյց տայ, դրամ գոյացնելու համար ծեռքը եղած վաճառքը շատ վար զինով ծախսէ, եւն: Օրինական պատիժը տաժանակիր աշխատութիւնն է:

Վճարումները դադրեցնող վաճառական մը եթէ մինչեւ ութ օր առեւտրական դատարանին դիմելով՝ իր կացութիւնը ցուցնող տետրակ մը — հաշուեկշոփ տետրակ — յանձնէ, իր իսկ դիմումին վրայ սնանկ կը հոչակուի: Հակառակ պարագային՝ պահանջատէրերէն մէկուն կամ մէկ քանիին պահանջումովը, դատարանը այդ վաճառականը սնանկ կը հոչակէ:

Վաճառական մը սնանկ հոչակուելէ ետքը՝ այլ եւս իրաւունք չունի իր ունեցածներու մասին ո եւ է տնօրէնութիւն ընել, վասն զի մինչեւ որ պարտքերը վճարուին՝ ինքն իր ունեցածին տէրը չէ այլեւս, այսինքն ոչ կը նայ բան մը ծախսէ, ո՛չ դրամ զանձել, ո՛չ նուել տալ եւն: Բոլոր ունեցածը կը պատկանի պահանջատէրերուն, որոնց ամբողջութիւնը մասա կը կոչուի, եւ որու պէտք է յանձնուին սնանկին բոլոր ունեցածները՝ համեմատաբար բաժ-

Պարզ սնանկութիւն. — Faillite simple, Ասի իֆլաս عادی افلاس

Թերութեամբ սնանկութիւն. — Banqueroute simple, Թագսիրաբդ

Մասա. — Masse, Մասա ماسه تقصیراتلى افلاس

Խարդախ սնանկութիւն. — Banqueroute frauduleuse, Հիյիկի իֆ-

Անանկութիւն. — Faillite, իֆլաس افلاس حيلهلى افلاس

նուելու համար պահանջատէրերուն միջեւ։ Եթէ պարտքերը զոցուելէ ետքը բան մը աւելնայ, սնանկին կը վերադարձուի։

Իսկ եթէ ունեցածները չի բաւեն պարտքերը վճարելու, պահանջատէրերը կրնան համաձայնիլ եւ օ՞ ին բան մը զեղչել իրենց առնելիքէն. այն ատեն համաձայնութիւն մը կը կնքեն, որ ֆոն-ֆորտաթօ կը կոչուի, եւ որով պահանջատէրերը իրենց մնացորդ պահանջքէն կը հրաժարին եւ սնանկը նորէն գործի կրնայ սկսիլ։ Իսկ եթէ համաձայնութիւն չի գոյանայ, սնանկին ամբողջ ունեցածները կը ծախեն եւ իւրաքանչիւր պահանջատէր իր պահանջքին համեմատական բաժին մը կ'առնէ. բայց այս պարագային սնանկը չի. կրնար նորէն իր անունով գործի սկսիլ, բանի որ պարտքը ամբողջովին չէ վճարած եւ ոչ ալ համաձայնութիւն գոյացուցած է պահանջատէրերուն հետ։

Որովհետեւ պահանջատէրերու ամբողջութիւնը չի կրնար անձամբ կառավարել սնանկին գործերը, իրենց կողմէ քուէի մեծամասնութեամբ կ'ընտրեն վերակացու կոչուած փոխանորդներ, որոնք դատարանին կողմէ նշանակուած ներկայացուցիչ դատաւորի մը հսկութեան տակ սնանկին գործերը կը կառավարեն, մինչեւ որ վերջնական կարգադրութիւն մ'ըլլայ։

Սնանկի մը խանութը, զանազան տեղեր ունեցած մթերանոցները, տանը մէջ ունեցած աւելորդ կարասիները եւն. կը կնքուին. տոմարները դատարան կը տարուին քննուելու համար, եւ եթէ դատարանը հարկ տեսնէ՝ զինքն ալ կը բանտարկէ։ Պահանջատէրերը կը հրաւիրուին ներկայանալ դատարանին եւ իրենց պահանջքները ապացուցանել։ Այն վաճառքները որոնք կրնան աւրուիլ, հոտիլ եւ կամ որոնց զիներուն վրայ մեծ անկումի մը հաւանականութիւն կայ, անմիջապէս կը ծախուին եւ դրամը կը պահուի։

Սնանկը, եթէ խարդախ սնանկ չէ, կրնայ պատւոյ վերահաստատում պահանջել, երբ իր ամբողջ պարտքը մինչեւ վերջին փարան վճարէ՝ ծախքերով ու տոկոսներով միասին։

Սնանկութիւնը ունի բարոյական, օրինական եւ քաղաքական հետեւանքներ։

Բարոյական. — Ուրիշները զինքը միշտ կասկածելի եւ խարդախ կը նկատեն՝ նոյն իսկ եթէ կրկին գործի սկսած է, եւ ատվ պատիւը միշտ ալարտուած կը մնայ։

Օրինական. — Ունեցածները կը զրաւուին պահանջատէրերու կողմէ եւ հազիւ ապրելու չափ բան մը կը ծգուի իրեն՝ զրեթէ իբր ոլորմութիւն։ Յորչափ պատիւը չէ վերահաստատած, չի կրնար ուսուցիչ, դատարանի առջեւ վկայ, փոխանորդ, խնամակալ, կտակակատար ըլլալ։

Քաղաքական. — Յորչափ պատիւը չէ վերահաստատուած՝ ընտրող եւ ընտրելի, զինուոր, պետական պաշտօնեայ չի կրնար ըլլալ, զէնք չի կրնար կրել։

Քոնքօրտական. — Concordat, قوْنَقُورْدَاتْو. **Վերակացու.** — Syndic, سندِيك. **Ներկայացուցիչ դատաւոր.** — Juge commissaire, رُوْزْ قوميْسَرْ.

ԳԼՈՒԽ Բ.

ՀԱՇՈՒԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

§ 1. — ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐ

34. — Վաճառականները ըստ օրինի պարտաւոր են տոմար բռնել, եւ այս պարտաւորութեան փոխարէն՝ իրաւունք ունին ըստ օրինի կանոնաւոր կերպով բռնուած տոմարներու պաշտոնակութեանց իրենց դատը ապայուցանելու։ Նոյն իսկ եթէ օրէնքը չպաշտալրէր՝ վաճառականները իրենց շահուն համար իսկ պարտաւոր էին տոմար բռնել, քանի որ մարդիկ չեն կրնար իրենց պարտքը կամ պահանջքը վստահիլ միմիայն իրենց յիշողութեան։

Օրէնքը այնքան խիստ կ'ը գով պայուիրած է տոմար բռնել որ, բնաւ տոմար չունեցող եւ կամ պարտաւորից տոմարները պահանջուածին պէս կանոնաւոր չի բռնով վաճառականը, սնանկութեան պաշտամային, կը նկատուի անհոգութեան հետեւանքով սնանկ, իսկ տոմարները խարշակողն ալ կը նկատուի խարշակ սնանկ։

Վաճառականական տետրակները երկու տեսակ են.

1. **ՊԱՐՏԱԿԱՐԻՉ ՏՈՄԱՐՆԵՐ**, զոր վաճառականները պարտաւոր են, ըստ օրինի, բռնել։

2. **ՕՖԱՆԴԱԿ ՏԵՏՐԱԿԱՆԵՐ**, զոր վաճառականները իրենց դիւրութեան համար կամ զուծին ընդարձակութեան եւ կամ մայնաւոր պահանջներուն համամատ հարկ կը տեսնեն բռնել։

35. Պարտաւորիչ տետրակներ. — Պարտաւորիչ տետրակները երեք հատ են.

1. **ՕՐՀԱՇԻՔ**, որ ամենէն կարեւոր տետրակն է. այդ տետրակին մէջ վաճառականը պարտաւոր է աշխանալր'լ — թուականի կարգով, մաքուր ու աւանց քերթուածքի — զնածը, ծախածը, քաշած կամ ընդունած եւ կամ վճարած փոխանակադիրը կամ մուրհակը եւ կամ աւելտրական ո եւ է թուղթը, իր անձնականին ըրած ծախսք'րը, իր հարստութիւնը աւելցնող կամ պակսեցնող բոլոր զործաւնութիւնները, այսինքն՝ ստայած նուէրը, կտակը կամ ժառանգութիւնը եւ կամ ո եւ է կերպով ըրած վնասները. օր. սնանկ յաճախորդներէ տեսած վնասը, զողցուած կամ ընկղմած կամ այրած վաճառքները եւայլն։ Վերջապէս օրհաշիւը պէտք է որ վաճառականին բոլոր զործաւնութիւններուն համատարիմ մէկ հայելին ըլլայ։ Տոմարներուն մէջ ճշմարդութեան հակառակ բաներ զբովը խիստ կերպով կը պատժուի։

Պարտաւորիչ տոմար. — Livres obligatoires.

Օժանդակ տետրակ. — Livres auxiliaires,

Օրհաշիւ. — Journal, يومنی.

2. ՆԱՄԱԿՆԵՐՈՒ ԸՆԴՈՐԻՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԵՏՐԸ, որու մէջ
կ'ընդօրինակուին վաճառականին՝ իր ընկերներուն, յանձնակա-
տարներուն, յաճախորդներուն եւ վերչապէս ուրիշներու զբած
նամակները. այս տետրակին միջոցով միայն կարելի կ'ըլլայ յիշել
թէ այս ինչ մարդուն, այս ինչ զործին մասին ի՞նչ զըուած է,
ի՞նչեր ապսպրուած են, ի՞նչ յանձնառութիւններ եղած են եւլն.
մանաւանդ վէճի մը կամ դատի մը պարագային՝ ո եւ է բան մը
հաստատելու միակ միջոցը Ընդօրինակութեան տետրն է:

Վաճառական մը ուրիշներէ իրեն եկած նամակներն ալ, միեւ-
նոյն նպատակով պէտք է պահէ՝ առ նուազն տասը տարի:

3. ՏԵՏՐ ՀԱՇՈՒԵԿՇՈՒԻ, որուն մէջ երեք կամ վեց ամիսը եւ
սովորաբար տարին անզամ մը կ'աճառականը պարտաւոր է անցը-
նել իր զոյքը օր. սնոռուկին դրամը, ի անութին մէջ զտնուած
վաճառքը, ուրիշներէ մուրհակով կամ առանց մուրհակի ու-
նեցած պահանչքը, կալուածները, արժէթուղթերը եւլն. իր
պարտքը եւ վերչապէս ասոնց տարբերութիւնը, որ կը կոչուի իր
դրամագլուխը:

Այս տետրակին չնորհիւ է որ կ'աճառականը պիտի կընայ գիտ-
նալ թէ մէկ տարուան մէջ չահի՞ր է թէ զնասեր եւ ո՞րչափ,
որպէս զի անոր համեմատ շարունակէ իր զործը կամ ուղղութիւնը
փոխէ :

Հաշուեկշուի տետրը իր մասնաւոր կարեւորութիւնը ու-
նի. օր. եթէ այս տետրակը ցուցնէ անանկ վիճակ մը, որով այլ
եւս անկարելի է զործը շարունակել եւ եթէ վաճառականը շա-
րունակէ, սնանկութեան մը պարագային այս ընթացքը թերութիւն
կընայ նկատուիլ եւ ըստ այնմ պատժուիլ. այս տետրակը պէտք
է շատ ինամքով եւ կանոնաւոր բռնել, որովհետեւ զոյքը կազմող
իրերէն մէկը եթէ չի զրուի, այս մոռացումը կամ սխալը կընայ
իբր դիտումնաւոր նկատուիլ եւ իբր ի արդախ սնանկ պատժուիլ:

Այս երեք տետրակներէն Հաշուեկշուի տետրը՝ զործածուելէն
առաջ, եւ Օրհաշիւի տետրն ալ՝ զործածուելէն թէ՝ առաջ եւ թէ՝
վերչը պէտք է Առեւտրական դատարանէն վաւերացնել տալ:

36. Հաշուակալութեան կարեւորութիւնը. — Աւելորդ է
այս մասին երկար խօսիլ. կը բաւականանանք միայն ըսելով թէ,
փործը կը ցուցնէ որ կանոնաւոր հաշուակալութեան մը շնորհիւ,
բազմաթիւ սնանկութիւններու առաջքը առնուած կ'ըլլար, շատ մը
վաճառատուններու տարեկան շահերը շատ աւելի մեծ կ'ըլլային,
յաճախորդի մը ունեցած պարտքին մասին ճիշտ զաղափար մը ու-
նենալով անոր չէր բացուեր վարկ մը որուն արժանի չէր, արժէ-
զինը շատ մանրակրկիտ կերպով որոշուելով՝ տարւոյն վերչը վաճա-
ռականները յուսախաբ չէին ըլլար եւայլն :

՝ دفتری گوی ։ Նամակներու ընդօրինակութեան տետր. — Copie de lettres, Հաշուեկշուի տետր. — Livre d'inventaire, بلانچو دفتری

Կողմացոյցը չէ որ նաւը կը քալեցնէ, բայց ան է որ զայն կ'առաջնորդէ. նոյնպէս ալ հաշուակալութեամբ չէ որ զործ մը կը կառավարուի, սակայն անով է որ կ'առաջնորդուի:

37. Հաշուակալութեան նպատակը. — Վաճառական մը իր առեւտրական տունին գործառնութիւններուն մասին ժշգրիտ զաղսփար մը կազմելու համար, ամէն վայրկեան պէտք է ի վիճակի ըլլայ զիտնալու՝

1. — Գործին մէջ ունեցած դրամագլուխը:
2. — Զանազան գործառնութիւններու մէջ տրամադրելի ունեցած արժէքները (դրամ, վաճառք, կաղուած եւայլն):
3. — Իր պարտքը եւ պահանձքը:
4. — Իր զործաւնութիւններու արդիւնքը (Շահը կամ վճառք):

Այս նպատակով վաճառականը՝

իր գործառնութիւնները կ'արձանագրէ (Օրհաշիւին մէջ), կը դասաւորէ (Մայր-Հաշիւին մէջ) եւ կ'ստուգէ այս բորբը մասնաւոր տոմարներու մէջ, հաշուակալութեան սկզբունքներուն եւ տոմարակալութեան օրէնքներուն համաձայն:

38. Հաշուակալութիւն եւ տոմարակալութիւն. — Այս երկու բաւերը յանախ իրարու իբր հոժանիշ կը գործածուին սխալ-մամբ եւ սակայն իրարևէ տարշեր նշանակութիւն ունին:

Հաշուակալութիւնը կը սովորեցնէ վաճառատան մը, պանքայի մը եւ այլն գործառնութիւնները արձանագրելու սկզբունքները եւ օրէնքները միայն, իսկ տոմարակալութիւնը՝ հաշուակալութեան սովորեցուցած օրէնքներուն կիրարկութիւնն է միայն:

Հաշուակալը ճարտարապետն է, տոմարակալը՝ գործաւորը. հաշուակալը ուղղութիւն կուտայ, տոմարակալը՝ ըստ այնմ կը գործադրէ:

39. — Հաշուակալութեան երկու գլխաւոր դրութիւն կայ.

1. — **ՊԱՐԶ ՏՈՄԱՐ,** որու համաձայն ո եւ է գործողութիւն միայն մէկ հաշիւի մը կ'անցնի. այն մարդուն հաշիւին՝ որու հետ որ զործ ըրած ենք:

ՕՐ. Ա. — Իբրանոսեան եղբայրներուն 100 ոսկիի վաճառք ծանեցիք. պէտք է զրել.

ԻԲՐԱՆՈՍԵԱՆ ԵՂԲԱՐՔ սպարտին 100 ոսկի:

ՕՐ. Բ. — Մանեասեանէ ստացայ 100 ոսկի. պէտք է զրել.

Ա. ՄԱՆԵԱՍԵԱՆ պահանջէ 100 ոսկի:

2. — **ԿՐԿՆԱՏՈՄԱՐ** որու համաձայն ո եւ է գործողութիւն երկու հաշիւի միանգամայն կ'անցնի. թէ՛ առնող եւ թէ՛ տուող մարդոց հաշիւներուն :

Հաշուակալութիւն . — Comptabilité, محاسبة

Տոմարակալութիւն . — Tenue de livres, دفتری

Պարզ տոմար . — à partie simple, بسيطه

Մասնաւորապէս պիտի ծանրանանք կրկնատոմարին վրայ, որ
սլարդ տոմարէն անբաղդատելիօրէն աւելի կառարելագործեալ է:

40. Հաշիւ. — Հաշիւ մը՝ ՊԱՐՏԻ եւ ՊԱՀԱՆՁԻ անունով երկու
մասի բաժնուած ցուցակ մըն է. ճախ կողի «Պարտի» ի մասին մէջ
կը զրուին հաշիւին տիբուծ տրուած գումարները. իսկ աշ կողի «Պահանջէ» ի մասին մէջ ալ անկէ առնուած գումարները:

Հաշիւ մը պարտական ընել՝ կը նշանակէ այդ հաշիւին Պարտիին
կողմը գումար մը անցնել, իսկ պահանջող ընել՝ կը նշանակէ Պա-
հանջէին կողմը գումար մը անցնել:

Հաշիւի մը Պարտիին եւ Պահանջէին տարբերութիւնը կը
կոչուի Կշիռ, որ պարտական է՝ եթէ Պարտին աւելի մեծ է քան
Պահանջէն, իսկ հակառակ պարագային՝ պահանչող է:

Հաշիւ մը հաւասարակշռուած է կ'ըսուի, երբ Պարտին հաւա-
սար ըլայ Պահանջէին:

Հաշիւ մը փակել՝ կը նշանակէ Պարտիին Պահանջէին տարբե-
րութիւնը, այսինքն Կշիռը աւելցնել տկար կողմին վրայ, թէ՛ Պար-
տիին եւ թէ Պահանջէին կողմերը հաւասար գումարներ ունենալու
համար:

41. Պարզ տոմարին անպատեհութիւնները. — Պարզ տո-
մարը երկու զյսաւոր անպատեհութիւն ունի.

1. Անկարելի է ճիշտ հակակշիռ մը ի գործ դնել զրութիւն-
ներու վրայ:

Եթէ հաշուակալը մունայ յաճախորդի մը հաշիւին հաշուեցու-
ցակի մը գումարը անցնել, ոչ մէկ քան կընայ այդ սխալը երեւան
հանել. Թերեւս դիպուածը կամ յաճախորդը, եթէ խղճամիտ է:

2. Վաճառականին կացութեան մասին անմիջական եւ ճշգրիտ
ո եւ է տեղեկութիւն չիտար:

Վերի օրինակին մէջ, զիտենք թէ իշրանոսեան եղբայրներէ
100 ոսկի պահանջք, իսկ Ա. Մանեասեանի ալ 100 ոսկի պարտք
ունինք, քայց չենք զիտեր թէ խանութիւն մէջ ո'րքան ապրանք կամ
սնտուկին մէջ ո'րքան դրամ ունինք:

Պարզ տոմարը ուրեմն կը ցուցնէ միայն մեր դիմացինին կա-
ցութիւնը մեզ հանդէպ, քայց բուն իսկ մեր կացութիւնը՝ ո՛չ:

Այս երկու անպատեհութիւններու պատճառով պարզ տոմարը
հետզհետէ կ'անհետանայ եւ իր տեղը կը թողու կրկնատոմարին որ,
ինչպէս պիտի տեսնենք, աւելի կատարեալ է:

Պարտի. — Doit, Débit, ذمت **Պահանջէ.** — Avoir, Crédit, مطلوب

Պարտական ընել. — Débiter, ذمت قيد ایتمک

Պահանջող ընել. — Créditer, قيد ایتمک

Հաւասարակշռուած. — Balance, قپاڭش

Հաշիւ մը փակել. — Cloturer un compte, بىر حسابى قپاتۇق

Կշիռ. — Balance, Solde, ميزان بقىيە

Կրկնատոմար. — à partie double, اصول مضاعفة

§ II. — ԿՐԿՆԱՏՈՄԱՐ

42. — Վաճառականական գործառնութիւն մ'ընելու համար միշտ երկու բանի պէտք կայ. «Առնող»ի մը, եւ «Տուող»ի մը:

Արդ, ո եւ է գործառնութիւն մը՝ այդ գործառնութիւնը կատարող երկու կողմերու հաշիւներուն ալ արծանազրել, կրկնատոմարի ղրութեամբ տետրակ բռնել կը նշանակէ:

Կրկնատոմարի մէջ, բան մը առնողը պարտական կ'ըլլայ, իսկ տուողը՝ պահանջող. հետեւաբար ամէն պարտական կողմ իր համապատասխանող պահանջող կողմը պէտք է ունենայ, ուրիշ բառով՝ միեւնոյն գումարը պէտք է անցնի մէկու մը Պարտին եւ ուրիշի մը Պահանջին: Օրինակով մը բացատրենք.

1. — Գ. Աղամեանի ծախեցի 100 ոսկիի վաճառք:

Այս գործողութիւնը, ըստ կրկնատոմարի արծանազրելու համար՝ պէտք է փնտուել հետեւեալ երկու հարցումներուն պատասխանը:

Ո՞Վ ԱՌԱԻ.

Գ. Աղամեան, հետեւաբար պէտք է պարտական ըլլայ, Ո՞Վ ՏՈՒԵԱԻ.

Վաճառքի հաշիւը, հետեւաբար պէտք է պահանջող ըլլայ, Որով Օրհաշիւին մէջ պէտք է զրել.

Գ. ԱԴԱՄԵԱՆ պարտի ԸՆԴՀ. ՎԱՃԱՌՔԻՆ Լ. 0. 100 —

2. — Կ. Խէրպէկեան ինձի վճարեց 200 ոսկի. առնողն է սնտուկս, տուողն է Կ. Խէրպէկեան. ուրեմն պէտք է զրել.

ՄՆՏՈՒԿ պարտի Կ. ԽէրՊէԿԵԱՆԻ Լ. 0. 200 —

Այս երկու օրինակներէն կը տեսնուի որ՝ կրկնատոմարի շնորհիւ կը զիտնանք չէ թէ միայն մեզ հետ գործող անձներուն, ինչպէս Գ. Աղամեանի պարտքը, Կ. Խէրպէկեանի պահանջքը, այլ բուն իսկ մեր կացութիւնը, այսինքն թէ սնտուկին մէջ ո'քան ղրամ, իսկ խանութին մէջ ո'քան վաճառք ունենալիս:

Վերոյիշեալ օրինակներուն մէջ գործող երկու կողմերէն մին միշտ մենք ենք, այսինքն այն վաճառականը, որուն տետրակը կը զրենք, հետեւաբար պէտք էր միշտ անոր անունը զրել. բայց որովհետեւ այս կերպով վաճառականին պարտքին կամ պահանջքին կողմը պիտի զրուէին շատ մը գումարներ, որոնց ինչ տեսակ արժէք ներկայացնելը յայտնի չպիտի ըլլար, այդ պատճառաւ կրկնատոմարի մէջ գործին տիրոջ անունը երբեք չեն զրել, այլ անոր տեղ զայն ներկայացնող հաշիւներ զտած են, որոնք կը կոչուին ընդհանուր հաշիւներ:

ՀԱՍԱԲԱՏ ԱՅՈՒԹ. — Comptes généraux,

ՀԱՆԴԻԱՆՈՒՐ ՎԱՃԱՌՔ. — Marchandises générales,

43. Ընդհանուր հաշիւներ. — Ընդհանուր հաշիւներու գլխաւորները հետեւեալներն են.

1. — **ԴՐԱՄԱԳԼՈՒԽ.** — Պահանջող՝ երբ դրամագլուխ կայ. Պարտական՝ երբ բաց կայ:

Օր. Ա. — ՄՆՏՈՒԿ պարտի ԴՐԱՄԱԳԼԽԻՆ Լ. 0. 1 000— կը նշանակէ թէ հնչուն 1 000 ոսկիով զործի սկսուած է:

Օր. Բ. — ԴՐԱՄԱԳԼՈՒԽ պարտի կիրակոսեանի Լ. 0. 1 500— կը նշանակէ թէ վաճառականը 1 500 ոսկի պարտքով միայն զործի սկսուած է, առանց փոխարէնը բան մը ունենալու. ուրիշ բառով, 1 500 ոսկի բաց ունի ըսել է:

2. — **ՄՆՏՈՒԿ.** — Պարտական՝ հասոյթներու, այսինքն ստացուած դրամներու համար. Պահանջող՝ վճարումներու համար:

Օր. Ա. — ՄՆՏՈՒԿ պարտի ՄԱԼԻԱՍԵԱՆԻ 75 դրշ. — կը նշանակէ թէ Մալխասեանէ 75 դրուշ հնչուն դրամ առնուեր է:

Օր. Բ. — ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ պարտի ՄՆՏՈՒԿԻՆ 143 դրշ. — կը նշանակէ թէ Յովհաննիսեանի 143 դրուշ հնչուն դրամ վճարուեր է:

3. — **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՃԱՌԻՔ.** — Պարտական՝ գնումներու համար. Պահանջող՝ վաճառումներու համար:

Օր. Ա. — ԸՆԴՀ. ՎԱՃԱՌԻՔ պարտի ՃԻՏԷՃԵԱՆԻ Լ. 0. 40— կը նշանակէ թէ ճիտէճեանէ 40 ոսկիի վաճառք գնուեր է:

Օր. Բ. — ՄԱՐԾԵԱՆ պարտի ԸՆԴՀ. ՎԱՃԱՌԻՔԻՆ 95 դրշ. — կը նշանակէ թէ Մարթեանի 95 դրուշի վաճառք ծախուեր է:

4. — **ԳԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ,** այսինքն վաճառականին հրամանին ստորագրուած կամ փոխանցուած տոմսակներու ամբողջութիւնը. — Պարտական՝ առնուած տոմսակներու եւ Պահանջող՝ զանձուած, ծախուած կամ ետ տրուած տոմսակներու համար:

Օր. Ա. — ԳԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ պարտի ՊՈՏՈՍԵԱՆԻ Լ. 0. 10— կը նշանակէ թէ Պոտոսեանէ 10 ոսկինոց տոմսակ մը առնուած է:

Օր. Բ. — ՄՆՏՈՒԿ պարտի ԳԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒ Լ. 0. 15— կը նշանակէ թէ 15 ոսկինոց տոմսակ մը զանձուեր եւ սնառուկը դրամ մտեր է:

5. — **ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ,** այսինքն վաճառականին՝ ուրիշներու հրամանին ստորագրած կամ ընդունագրած մուրհակներամագլուխ. — Capital, سرمایه Caisse, عاصمة

Գանձելի տոմսակներ. — Effets à recevoir, تخصیل سنداتی

զու կամ փոխգրերու այբողջութիւնը. — Պահանջող ստորագրուած-ներու, Պարուական՝ վճարումներու կամ ետ աւնուածներու համար:

Օր. Ա. — Ն. ԳԱՐԱՃԵԱՆ պարտի ՎՃ. ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒ Հ.Օ. 30—
Կը նշանակէ թէ Գարաճեանի հրամանին 30 ոսկինոց տոմսակ մը
ստորագրուեր է:

Օր. Բ. — ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ պարտի ՍՆՏՈՒԿԻՆ 800 դրշ.—
Կը նշանակէ թէ ստորագրուած 800 դրուշնոց տոմսակ մը հնչուն
դրամով վճարուեր է:

6. — ՇԱՀ ԵՒ ՎՆԱՍ. — Պարուական՝ վնասներու, Պահանջող
շահերու համար:

Օր. Ա. — ՍՆՏՈՒԿ պարտի ՇԱՀ ԵՒ ՎՆԱՍԻ 90 դրշ.—
Կը նշանակէ թէ սնտուկին մէջ 90 դրուշի զումար մը մտեր է,
որու փոխարէն մէկու մը պարտական չեմ. այդ դրամը շահ մըն է
ինծի համար:

Օր. Բ. — ՇԱՀ ԵՒ ՎՆԱՍ պարտի ՍՆՏՈՒԿԻՆ 40 դրշ.—
Կը նշանակէ թէ սնտուկէն 40 դրուշ ելեր է եւ սակայն այդ զու-
մարին համար ոչ ոք պարուական է ինծի, որով այդ դրամը վնաս
մըն է ինծի համար:

Այս հաշիւներէն զառ, ամէն վաճառական իր զործին բնու-
թեանը համեմատ, կրնայ ուզածին չափ հաշիւներ ստեղծել:

44. Հաւաքական հաշիւներ. — Վաճառատան մը յաճա-
խորդներէն ունեցած պահանջքը եւ ուրիշներու ալ ունեցած պարտ-
քը ամէն վայրկեան կարենալ զիտնալու համար՝ պէտք է դիմել
Մայր - Հաշիւին եւ անոր մէջ իւրաքանչիւրին համար բացուած
հաշիւները մի առ մի բննել, Պարտիին եւ Պահանջէին տարբերու-
թիւնը զտնել, զանոնք թղթի մը վրայ հաւաքնել եւ յետոյ զումա-
քել. այս արդիւնքը այս կերպով զտնել՝ մեծ աշխատութեան կը
կարօտի, մանաւանդ երբ նկատողութեան առնուի թէ՝ վաճառա-
տուն մը կրնայ հարիւրաւոր հազարաւոր յաճախորդներ ունենալ:

Մէկ ակնարկով զիտնալու համար թէ մեր յաճախորդներու ամ-
քողջութենէն ո'րքան պահանջք, եւ մեր հայթայթիչներու այբող-
ջութեան ո'րքան պարոք ունինք, ԶԱՆԱԶԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՆԵՐ եւ
ԶԱՆԱԶԱՆ ՊԱՀԱՆՁՈՂՆԵՐ անունով հաւաքական հաշիւները կը
զործածուին

Այս հաշիւներէն աւագինը պէտք է պարտական ընել յա-

Վճարելի տոմսակներ. — Effets à payer, تأديه سنداتي

Շահ և Վնաս. — Profits et Pertes, کار و ضرر

Հաւաքական հաշիւներ. — Comptes collectifs, حسابات جامعه

Զանազան պարտականներ. — Débiteurs divers, متعدد بورجيبل

Զանազան պահանջողներ. — Créditeurs divers, متعدد آلاجقلييل

ճախորդներու տրուածներուն համար, իսկ պահանջող՝ անոնցմէ առնուածներուն կամ անոնց վճարումներուն համար:

Իսկ երկրորդը՝ կ'ըլլայ պահանջող՝ հայթայթիչներէ առնուածներու եւ պարտական՝ անոնց տրուածներուն համար:

Ամէն յաճախորդ կամ հայթայթիչ երկու անուն ունի ուրեմն. մին հաւաքական, իսկ միւսը անհատական:

Օր. Ա. — Միհրան Նազգաշեանի ծախեցինք 200 ոսկիի վաճառք: — Միհրան Նազգաշեանի նման մեր բողը յաճախորդներու հաւաքական անունն է ԶԱՆԱԶԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՆԵՐ. ուրեմն պէտք է նախ այդ հաշիւը պարտական ընել եւ զրել Օրհաշիւին ԱԷՉ.

ԶԱՆԱԶԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՆԵՐ պարտի ՀՆԴՀ. ՎԱՃԱՌՔԻՆ Լ.Օ. 200 —
Յետոյ մեր յաճախորդներէն իւրաքանչիւրին հաշիւը զիտնալու համար պէտք է անոնց ամէն մէկուն հաշիւ մը բանալ օժանդակ տետրակի մը մէջ. այդ բանը կարենալ ընելու համար վերոյիշեալ յօդուածին տակ պէտք է աւելցնել.

Միհրան Նազգաշեանի ծախած վաճառքներս:

Օր. Բ. — Թէոտոր Մենծիկեանէ զնեցինք 50 ոսկիի վաճառք: Օրհաշիւին մէջ պէտք է զրել.

ՀՆԴՀ. ՎԱՃԱՌՔ պարտի ԶԱՆԱԶԱՆ ՊԱՀԱՆՁՈՂՆԵՐՈՒ Լ.Օ. 50 —

Թ. Մենծիկեանէ գնածներս:

Որովհետեւ Թէոտոր Մենծիկեանի նման ինձմէ Պահանջք ունեցողներուն հաւաքական անունն է ԶԱՆԱԶԱՆ ՊԱՀԱՆՁՈՂՆԵՐ:

45. Հաշիւներու ստորաբաժանումները. — Ընդհանուր հաշիւներէ ոմանք կրնան իրենց ստորաբաժանումները ունենալ: Այսպէս:

Ընդհ. Վաճառքը բոլոր վաճառքներուն հաւաքական անունն է. բայց եթէ պէտք ըլլայ, օրինակի համար, թէյի, սուրճի եւ շաքարի վրայ զործ ընող վաճառական մը կրնայ ասոնցմէ իւրաքանչիւրին համար ուրոյն հաշիւ մը բանալ, զիտնալու համար թէ ի՞նչ շահած է թէյէն, ո՛րքան սուրճ ունի եւայլն:

Եահ եւ վնասի հաշիւը կը ցուցնէ վաճառականին շահը կամ վնասը. բայց զիտնալու համար թէ խանութին, անձնականին համար եւայլն ո՛րքան ծախսք ըրած է, պէտք է բանալ Զանազան ծախս, Անձնական ծախս, Տնական ծախս եւայլն հաշիւները, առած կամ տուած տոկոսներու համար Տոկոսի հաշիւը, եւ այսպէս որքան ուզէ մանրամասն կերպով զիտնալ՝ այնքան աւելի շատ հաշիւներ կրնայ բանալ:

46. Հաշուակալութեան մէջ գործածուած տետրակները. — Պարզ տումարի, ինչպէս նաեւ կրկնալումարի մէջ զործածուած անհրաժեշտ տետրակները հետեւեալներն են,

1. ԶԵՌԱՏԵՏՐԸ որուն մէջ վաճառականը կը զրէ իր ըրած բոլոր գործառնութիւնները, շատ որոշ եւ յստակ կերպով եւ բոլոր մանրամասնութիւններով, օրը օրին, թուականի կարգով:

Չեռատետրին նպատակն է օրհաշիւին գործը ղիւրացնել: Ինչպէս նախապէս ալ ըսինք, օրհաշիւին մէջ կարելի չէ աւրել, քերթել, սրբազրել եւայլն. այդ պատճառով գործողութիւն մը Չեռատետրին մէջ իր վերջնական ծեւը առնելէ ետքը. միայն պէտքէ Օրհաշիւ անցնել:

2. ՕՐՀԱՇԻՒԾ, որ օրէնքին պահանջած տետրակներէն զիսաւորն է եւ որուն մէջ ամէն գործողութիւն, ծեռատետրէն առնուելով կը զրուի, պարտականը եւ պահանջողը որոշելով, կը կնատոմարի սկզբունքներու համաձայն:

3. ՄԱՅՐ – ՀԱՇԻՒԾ, որու մէջ կը դասաւորուին Օրհաշիւին գործողութիւնները, իւրաքանչիւր հաշիւի համար յատկացնելով մէկ մէկ էջ եւ մէկ ակնարկով տեսնելու համար մէկու մը կամ հաշիւի մը առածները եւ տուածները:

Օրհաշիւէն Մայր – հաշիւ անցած իւրաքանչիւր հաշիւի առջեւ կը դրուի Մայր – հաշիւին էջին թիւը եւ Մայր – հաշիւին մէջ ալ Օրհաշիւին էջին թիւը:

Այս տետրակներէն իւրաքանչիւրին ծեւը ցուցուցած ենք զրքին վերջը:

47. ՕՃԱԿԱԿ ՏԵՏՐԱԿՆԵՐ. — Վաճառական մը կը նայ ուղածին չափ – օրէնքին պահանջած երեք տետրակներէն զատ, գործին բնոյթին եւ պահանջքին համեմատ – տետրակներ ունենալ, որոնք զանազան անուններ եւ ծեւեր կ'ունենան եւ որոնց օժանդակ տետրակներ անունը կուտան:

Ասոնցմէ ամենէն կարեւորներն են Մթերատետր, Սնտուկի տետր, Գանձելի եւ Վճարելի տոմակներու տետրակները եւայլն:

1. ՄԹԵՐԱՏԵՏՐԸ Մայր – հաշիւին նման տետրակ մըն է, որուն մէջ յաճախորդներու անուններու տեղ՝ վաճառքի իւրաքանչիւր տեսակի համար առանձին հաշիւներ կը բացուին: Զախ կողմը կը ցուցնէ «Մուտֆ»ը – վաճառքին համեմատ՝ ծրարը, պարկը, մէթը, օխան, քանիի եւ ուրկէ զնուած ըլլալը եւ գումարը. աջ կողմը նոյն բաններով՝ «Ելֆ»ը:

Այս տետրակին միջոցով կարելի կ'ըլլայ հասկնալ թէ այս ինչ տեսակ վաճառքէն որքան ունինք, եւ նոյն իսկ որքան շահեր ենք:

Առանց այս տետրակին՝ հարկ կ'ըլլայ ամէն վայրկեան վաճառատունին մէջ զտնուած վաճառքները մէկիկ մէկիկ համրել, կշռել եւայլն, ինչ որ ժամանակի ահազին կորուստ է:

2. Սնտուկի տետրը Մայր - հաշիւին սնտուկի էջին յար եւ նմանն է եւ հնչուն դրամով եղած գործառնութիւններուն անմիջական արձանագրութեանը կը ծառայէ :

Այդ տետրակով է որ ամէն երեկոյ վաճառականը իր սնտուկին մէջի դրամը կը ճշդէ :

3. Գանձելի եւ վճարելի տոմսակներու տետրակներուն մէջ կ'արձանագրեն կարգաւ զանձելի եւ վճարելի տոմսակները՝ իրենց բոլոր մանրամասնութիւններով, թուական, վճարօր, հրաման, փոխանցում (եթէ կայ), գումար եւ այլն:

Ոմանք այս տետրակներուն տեղ պարզապէս Յուշատետր մը կը գործածեն:

48. Զանազան տեսակ յօդուածներ. — Օրհաշիւ անցած որ եւ իցէ գործողութիւն յօդուած կը կոչուի:

Երեք տեսակ յօդուած կայ.

1. — **ՊԱՐՁ ՅՈՒՌԻԱԾ՝** որուն մէջ մէկ պարտական եւ մէկ պահանջող կայ:

Օրինակ. — 500 դրուշի վաճառք ծախելով՝ ստակը զանձեցինք: Այս գործողութիւնը պիտի ցուցնենք հետեւեալ պարզ յօդուածով.

ՍՆՏՈՒԿ Պարտի ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻՒՆ 500 դր. —

2. — **ԲԱՂԱԴՐԵԱԼ ՅՈՒՌԻԱԾ՝** որուն մէջ մէկ պարտական եւ մէկէ աւելի պահանջողներ եւ կամ՝ մէկ պահանջող եւ մէկէ աւելի պարտականներ կան:

Օրինակ Ա. — 750 դրուշի վաճառք ծախելով՝ փոխարէնը ստացանք, եւ ատկից զատ, 1 500 դրուշի տոմսակ մըն ալ զանձեցինք:

Այս գործողութիւնը կրնանք հետեւեալ 2 պարզ յօդուածներով ցուցնել.

Ա. — **ՍՆՏՈՒԿ Պարտի ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻՒՆ 750 դր.** —

Բ. — » » **ԳԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒ 15 00 դր.** —

Սակայն ընդհանրապէս, զբութիւնը կրնատելու համար, վերի գործառնութիւնը կը ցուցնեն հետեւեալ մէկ յօդուածով՝ որու մէջ մէկ պարտական եւ երկու պահանջող կայ.

ՍՆՏՈՒԿ Պարտի **ԶԱՆԱՋԱՆՆԵՐՈՒ 22 50 դր.** —

ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻՒՆ 750 դր.

ԳԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒ 15 00 "

22 50 "

Օրինակ Բ. — Կիրակոսեանէն ստացանք 1 500 դրուշ հնչուն դրամ, 800 դրուշի վաճառք եւ 2 200 դրուշի արժէթուղթ: Փոխանակ այս գործառնութիւնը 3 պարզ յօդուածներով նշանակելու, կրնանք հետեւեալ բաղադրեալ յօդուածը զբել:

ԶԱՆԱԶԱՆԵՐ Պարտիա ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ 45 00 դրշ. —

ՍՆՏՈՒԿ	15 00	դրշ.
ԸՆԴՀ. ՎԱՃԱՌՔ	8 00	"
ԱՐԺԷԹՈՒՂԹԵՐ	22 00	"
	<u>45 00</u>	"

3. — ԽԱՌ ՅՈՒՆԻԱԾ՝ որուն մէջ մէկէ աւելի պարտականներ եւ մէկէ աւելի պահանջողներ կը գտնուին:

Օրինակ — Մալխասեանէ 100 ոսկի դրամ եւ 50 ոսկիի վաճառք առնուեր եւ փոխարէնը 125 ոսկիի մուրհակ մը տրուեր է եւ մնացած 25 ոսկին ալ Մալխասեանի պահանչք արծանագրուեր է:

Այս գործողութիւնը կը նշանակենք հետեւեալ խառն յօդուածով.

ԶԱՆԱԶԱՆԵՐ պարտիա ԶԱՆԱԶԱՆԵՐՈՒ 150 00 դրշ. —

ՍՆՏՈՒԿ	100 00	դրշ.
ԸՆԴՀ. ՎԱՃԱՌՔ	50 00	"
	<u>150 00</u>	"

ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒ 125 00 դրշ.

ՄԱԼԻԱՍԵԱՆԻ	25 00	"
	<u>150 00</u>	"

Դիտողութիւն I. — Խառն յօդուածներու դրութիւնը, որ կը գործածուի առհասարակ տոմարակալին աշխատութիւնը դիւրացնելու համար, բնաւ յանձնարարելի չէ, բաց ի այն պարագաներէն, երբ անկարելի է ուրիշ կերպ ընել, որովհետեւ այդ դրութեամբ անցած յօդուածները սովորաբար թերի կողմ մը կ'ունենան:

Օրինակի համար, վերի յօդուածը եղածին պէս պահելէ վերջ, եթէ օր մը ուզենք հասկնալ թէ Մալխասեանի հետ ո՛րքան գործառնութիւն ունեցած ենք, անկարելի կ'ըլլայ մէկ ակնարկով գտնել. այդ բանը հասկնալու համար հարկ պիտի ըլլար երկար բարակ փնտուել, մինչդեռ եթէ այդ գործողութիւնը երկու յօդուածով արծանագրուած ըլլար, բան մը օր կ'ընեն ու պէտք է ընեն բոլոր խղճամիտ տոմարակալները, ո՛չ միայն բոլոր հաշիւները նոյն ճիշտ արդիւնքը կուտային, այլ եւ մէկ ակնարկով կը տեսնէինք թէ Մալխասեանի հետ 150 ոսկիի գործ մ'ըրած ենք, որու 125 ոսկին կարգադրած ենք մուրհակով մը եւ 25 ոսկին ալ կը պարտինք :

Հետեւաբար յանձնաբարելի է այդ իւառ յօղուածը, առաջինը՝ բաղադրեալ եւ երկրորդը՝ պարզ, հետեւեալ երկու յօղուածներով զրել.

ԶԱՆԱԶԱՆԵՐ պարտին **ՄԱԼԻԱՍԵԱՆԻ** 150 00 դր. —

ՄՆՏՈՒԿ	100 00	դր.
ԸՆԴՀԱ. ՎԱՃԱՌԻ	50 00	"
	150 00	"

ՄԱԼԻԱՍԵԱՆ պարտի ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒ 125 00 դր. —

Դիտողութիւն II. — Գործնականի մէջ, յօղուած-մը շինած ատեննին, պարտի բառը չեն զրեր, այլ լրելեայն կ'իմանան:

Դիտողութիւն III. — Մէկէ աւելի պարտական եւ կամ պահանջող հաշիւները ի մի ամփոփելով Զանազաններ անունով կը ցուցնեն. Մայր - Հաշիւի մէջ այս անունով հաշիւ չի բացուիր:

49. Գանձելի եւ վճարելի տոմսակներու հաշիւներուն օգուտը. — Ապառիկ վաճառումի պարագային յաճախորդը պարտական եւ ընդհ. վաճառքը պահանջող կ'ընէինք. Եթէ փոխարէնը մուրհակ մը կամ փոխզիր մը ստանանք, այդ յաճախորդին հաշիւը պէտք է փակել, որովհետեւ ան այլեւս բաց չկրնար մնալ, բանի որ մուրհակ առինք եւ վճարօրէն առաջ ոեւ է բան չենք կրնար պահանջել:

Այս պարագային պէտք է բանալ Գանձելի Տոմսակներ անունով հաշիւ մը, իբր պարտական. Եւ եթէ վճարօրին մուրհակը զանձուի Սնէտուկը պարտական եւ Գանձելի Տոմսակները պահանջող ընել:

Եթէ մուրհակ առնելու գործողութիւնը վաճառումին հետ նոյնօրը պատահի, փոխանակ նախ յաճախորդին անունին հաշիւ բանալու եւ յետոյ անմիջապէս Գանձելի Տոմսակով զոցելու, ընդհանրապէս սւղղակի Գանձ. Տոմսակները եւ Ընդհ. Վաճառքը դէմ առ դէմ կը բերենք եւ մէկ յօղուած մը զրած կ'ըլլանք:

Այսպէս ընելը շատ յանձնաբարելի չէ, որովհետեւ այդպէսով ի հարկին դժուար կ'ըլլայ հասկնալ թէ յաճախորդ մը որքան զործ ըրած է որոշ ժամանակամիջոցի մը մէջ :

Նոյն բաները հակառակ կերպով, պէտք է հասկնալ Վճարելի տոմսակներու համար :

Օրինակ Ա. — 1. — Յովսէփեանի ապառիկ 2 500 դրուշի վաճառք ծախեցի: Այս զործողութիւնը ցուցնող յօղուածը կ'ըլլայ.

ՅՈՎՍԷՓԵԱՆ ԸՆԴՀ. ՎԱՃԱՌԻ 2 500 դր. —

2. — Յովսէփեանէ ունեցած առնելիքիս փոխարէն 2 500 դրուշնոց մուրհակ մ'առի: Այս զործողութիւննալ հետեւեալ յօղուածով կը ցուցնեմ.

ԴԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ

ՅՈՎԱՀԻՓԵԱՆԻ

25 00 դր. —

3. — Մուրհակին պայմանաժամը եկաւ եւ զանձեցի : Այս գործողութիւնն ալ կը ցուցնեմ հետեւեալ յօդուածով.

ՍՆՏՈՒԿ

ԴԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒԻ

25 00 դր. —

Այսպէսով նոյն գումարին համար պարտական եւ պահանջող Յովսեփեանները, ինչպէս նաեւ Գանձելի Տոմսակները զիրար կը ջնջեն եւ միայն Սնտուկը պարտական կը մնայ Ընդհ. վաճառքին, ճիշտ այնպէս ինչպէս պիտի պատահէր, եթէ կանխիկ դրամով վաճառք ծախած ըլլայի :

Օրինակ Բ. — 1. — Կոմիտասեանէ 1 200 դրուշի ապառիկ գնեցի : Այս գործողութիւնը կը նշանակուի.

ԸՆԴՀ. ՎՃԱՌԱՐԻՔ

ԿՈՄԻՏԱՍԵԱՆԻ

12 00 դր. —

2. — Պարտքիս փոխարէն 1 200 դրշնոց մուրհակ մը տուի : Այս գործողութիւնն ալ կը գրուի.

ԿՈՄԻՏԱՍԵԱՆ

ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒԻ

12 00 դր. —

3. — Մուրհակին պայմանաժամը եկաւ ու վճարեցի : Այս գործողութիւնն ալ կը նշանակուի.

ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ

ՍՆՏՈՒԿԻՆ

12 00 դր. —

Այսպէսով ալ նոյն գումարին համար պահանջող եւ պարտական Կոմիտասեանները, ինչպէս նաեւ Վճարելի Տոմսակները զիրար կը ջնջեն, եւ միայն Ընդհ. Վաճառքը պարտական կը մնայ Սնտուկին, ճիշդ այնպէս ինչպէս պիտի պատահեր եթէ կանխիկ դրամով վաճառք գնած ըլլայի :

ՀՕ. Դրամագլխին կազմութիւնը. — Վաճառականի մը Գոյքին (դրամը, վաճառքը, պահանջքը. եւ այլն) եւ Պարտքին տարբերութիւնը կը կոչուի ԴՐԱՄԱԳԼՈՒԻԽ. այս այն բանն է զոր վաճառականը դրած է զործին մէջ :

Տրուած ըլլալով որ վաճառականն է որ կուտայ, ուրեմն պէտք է որ ան պահանջող ըլլայ. սակայն վաճառականին տեղն ալ Դրամագլուխը կը բռնէ, ուրեմն ան պէտք է պահանջող ըլլայ. իսկ պարտական կ'ըլլան անոնք որ զոյքը կ'առնեն :

Ասկից կը հասկցուի թէ հաշիւ մը բացուած ատենը Գոյքը եւ Պարտքը իրարու հաւասար պէտք է ըլլան, քանի որ անոնց տարբերութիւնը եղող ԴՐԱՄԱԳԼՈՒԻԽ ալ Պարտքը կազմող հաշիւներուն կարգին կը դնենք, իբրեւ թէ Դրամագլուխ անունով մէկն ալ զոյւթիւն ունենար որ զործէն պահանջող է :

Իրականին մէջ այդ մէկը բռն իսկ վաճառականն է :

Օրինակ. — Վաճառական մը զործի կը սկսի իբր դրամագլուխ ունենալով հետեւեալները.

Վաճառք 500 ոսկի. — Հնչուն դրամ 600 ոսկի. — Զանազան-ներէ զանձելի տոմսակներ 700 ոսկի :

Անմիջապէս կը տեսնենք թէ դրամագլուխը 1800 ոսկի է: Բայց կրկնատոմարի մէջ, միայն դրամագլուխին որքան ըլլալը գրել բաւական չէ, այլ պէտք է ցուցնել նաեւ թէ դրամագլուխը ինչերէ կազմուած է :

Առնողներն են ԸՆԴ. ՎԱՃԱՌՔԸ, ՄՆՏՈՒԿՐ Եւ ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄ-ՍԱԿՆԵՐԸ, որով այս երէք հաշիւները պարտական ընել պէտք է: Իսկ տուողը՝ վաճառականը, եւ կամ զույն ներկայացնող ԴՐԱ-ՄԱԳԼՈՒԽՆ է, որով այդ հաշիւն ալ պահանջող պիտի ըլլայ:

Հետեւաբար Օրհաշիւխն մէջ դրամագլխին կազմուելիւնը ցու-ցնող առաջին յօդուածը պէտք է ըլլայ հետեւեալը.

ԶԱՆԱՉԱՆՆԵՐ	ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ	1 800 00
ԸՆԴ. ՎԱՃԱՌՔ	500 00	
ՄՆՏՈՒԿ	600 00	
ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ	700 00	
	<u>1 800 00</u>	

Եթէ Գոյքը եւ Պարտքը հաւասար ըլլան, սա կը նշանակէ թէ վաճառականը իրեն յատուկ ո եւ է բան չունի, որով եւ տետրակ-ներուն մէջ Դրամագլուխ անունով հաշիւ զոյութիւն չունենար:

Օրինակ. — Մէկը իր հօրմէն 500 ոսկիի վաճառք, բայց փո-խարէն ալ Թորոսեանի 500 ոսկիի պարտք ժառանգած է, եւ կը փափազի զործը շարունակել, յուսալով որ վաճառքը շահով կը ծախէ, պարտքը կը վճարէ եւ իրեն ալ բան մը կ'աւելնայ, որ իր դրամագլուխը պիտի կազմէ: Գրուելիք յօդուածը հետեւեալն է.

ԸՆԴ. ՎԱՃԱՌՔ	ԹԱՐՈՍԵԱՆԻ	500 00
-------------	-----------	--------

Եթէ պարտքը աւելի շատ ըլլայ բան Գոյքը, այն ատեն կ'ըսեն թէ վաճառականը բաց ունի: Այդ պարագային դրամագլուխը պար-տական կ'ըլլայ, անցնելով զոյքը կազմոլ հաշիւներուն կարգը:

Օրինակ. — Մէկը իր հօրմէն ժառանգած է 500 ոսկիի վա-ճառք, փոխարէն 600 ոսկիի ալ պարտք Կիրակոսեանի, եւ կը փա-փազի զործը շարունակել, յուսալով որ վաճառքը շահով կը ծախէ, պարտքը կուտայ եւ դեռ իրեն ալ բան մը կ'աւելնայ, որ իր դրա-մագլուխը պիտի կազմէ. — Կը զրենք Օրհաշիւխն մէջ.

ԶԱՆԱՉԱՆՆԵՐ	ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ	600 00
ԸՆԴ. ՎԱՃԱՌՔ	500 00	
ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ	100 00	
	<u>600 00</u>	

Այս կերպով իր տոմարներուն մէջ ցուցուցած կ'ըլլանք հարիւր ուկի բացով գործի սկսած ըլլա ը:

Տարուան ընթացքին վաճառականին ըրած վնասները կամ շահերը դրամագլուխը կը պակսեցնեն կամ կ'աւելցնեն. բայց սովորութիւն է անփոփոխ պահել դրամագլուխը, եւ անոր տեղ, իբր ստորաբաժանում, բանալ ՇԱՀ ԵՒ ՎՆԱՍ հաշիւը, որ ինք ալ իր կարգին իր ստորաբաժանումները ունի ինչպէս որ տեսանք :

Տարւոյն վերջը (սովորաբար Դեկտեմբեր 31ին) այս ստորաբաժանումները կը գոցուին ՇԱՀ ԵՒ ՎՆԱՍով, որ ինքն ալ իր կարգին կը գոցուի՝ տարբերութիւնը, այսինքն շահը կամ վնասը, տարուելով դրամագլխին :

Օրինակ. — 500 ոսկիի վաճառքով գործի սկսայ.

ԸՆԴՀ.	ՎԱՃԱՌՔ	ԴՐԱՄԱԳԼԽԻՆ	500 00 —
-------	--------	------------	----------

Վաճառքը ծախսեցի կանխիկ 600 ոսկիի.

ՄՆՏՈՒԿ	ԸՆԴՀ.	ՎԱՃԱՌՔԻՆ	600 00 —
--------	-------	----------	----------

Վաճառքէն շահեցայ 100 ոսկի, ալ բնաւ վաճառք չունիմ.

ԸՆԴՀ.	ՎԱՃԱՌՔ	ՇԱՀ ՈՒ ՎՆԱՍԻՆ	100 00 —
-------	--------	---------------	----------

Շահած 100 ոսկիէս ծախսեցի 50 ոսկի (սա վճառ մ'է ինձի համար).

ՇԱՀ ՈՒ ՎՆԱՍ	ՄՆՏՈՒԿԻՆ	50 00 —
-------------	----------	---------

Չուտ շահածս, այսինքն Շահ ու Վճառին տարբերութիւնը կ'աւելցնեմ դրամագլխին վրայ.

ՇԱՀ ՈՒ ՎՆԱՍ	ԴՐԱՄԱԳԼԽԻՆ	50 00 —
-------------	------------	---------

Բոլոր հաշիւները այսպէսով կը գոցուին, կը մնայ միայն Սևուկը եւ Դրամագլուխը. ասկից կը հասկցուի որ նոր դրամագլուխս է 550 ոսկի, եւ իրօք ալ սնտուկին մէջ այդքան հնչուն դրամ ունիմ :

ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՄԸ ՍՈՎՈՐԱԲԱՐ ԸՐԱԾ ԴՐԾԱՌ- ՆՈՒԹԻՒՆԵՐԸ ԵՒ ԶԱՆՈՒՔ ՏՈՄԱՐ ԱՆՑՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

51. — Կանխիկ (հնչուն դրամով անմիջապէս վճարելի). գործառնուրիւններ :

Գնում. — Պարտական ընել Ընդհ. Վաճառքը որ կառնէ, պահանջող ընել Սևուկը՝ որ կուտայ:

Օրինակ. — 100 ոսկիի վաճառք գնեցի կանխիկ : Այս գործառնութիւնը կը ցուցնեմ.

Ընդհանուր. ՎԱՃԱՌՔ ՍՆՏՈՒԿԻՆ 100 00 դր.

Վաճառում. — Պարտական՝ Սնտուկը որ կ'առնէ, Պահան-
ջող՝ Ընդհ. վաճառքը որ կ'ուտայ:

Օրինակ. — 50 ոսկիի վաճառք ծախեցի կանխիկ.

ՍՆՏՈՒԿ ԸՆԴՀ. ՎԱՃԱՌՔԻՆ 50 00 դր.

**52. — Բաց ապառիկ (առանց բուղրի) գնում կամ
վաճառում:**

Գնում. — Պարտական Ընդհ. վաճառքը որ կ'առնէ, եւ պա-
հանջող՝ հայթայթիչը որ կ'ուտայ. Վճարելու ատենն ալ հայթայթիչը
պարտական, Սնտուկը պահանջող ընելու է:

Օրինակ. — Գ. Աղամեանէ գնեցի 100 ոսկիի վաճառք.

ԸՆԴՀ. ՎԱՃԱՌՔ Գ. ԱՂԱՄԵԱՆԻ 100 00 դր.

Վճարելու ատեն.

Գ. ԱՂԱՄԵԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ 100 00 դր.

Վաճառում. — Պարտական՝ Յաճախորդը, Պահանջող՝ Ընդհ.
Վաճառքը:

Օրինակ. — Յ. Բէրմէզեանի ծախեցի 200 ոսկիի վաճառք.

Յ. Բէրմէզեան ԸՆԴՀ. ՎԱՃԱՌՔԻՆ 200 00 դր.

Գանձելու պարագային.

ՍՆՏՈՒԿ Յ. ԲԷՐՄԷԶԵԱՆԻ 200 00 դր.

53. Մուրիակով կարգադրութիւն. — Մուրիակը պարտա-
կանին համար վճարելի տոմսակ է, իսկ պահանջատիրոջ համար՝
գանձելի տոմսակ :

Գնումի պարագային. — Պարտական ընել հայթայթիչը (որ
մուրիակը կ'առնէ) եւ պահանջող. ընել Վճարելի Տոմսակները:

Օրինակ. — Մ. Նազաշեանէ գնեցի 100 ոսկիի վաճառք.

ԸՆԴՀ. ՎԱՃԱՌՔ Մ. ՆԱԶԱՇԵԱՆԻ 100 00 դր.

Կարգադրեցի մուրիակով մը.

Մ. ՆԱԳԴԱՇԵԱՆ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒՆ 100 00 դր.
Եւ կամ մէկ յօդուածով.

ԸՆԴՀ. ՎԱՃԱՌՔ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒՆ 100 00 դր.

Վաճառումի պարագային. — Պարտական՝ Գանձելի Տոմ-
սակները, իսկ պահանջող՝ յաճախորդը որ մուրիակը կուտայ:

Օրինակ. — Տիգրան Զէօկիւրեանի ծախեցի 50 ոսկիի վաճառք.

Տ. Զէօկիւրեան ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻՒ 50 00 դր.

Կարգադրեց մուրհակով մը.

ԳԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ Տ. Զէօկիւրեանի 50 00 դր.

Եւ կամ մէկ յօդուածով.

ԳԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻՒ 50 00 դր.

54. Փոխանակագրով կարգադրութիւն. — Փոխանակագիրը կը քաշէ պահանջատէրը պարտականին վրայ. ուրեմն փոխանակագիրը առաջինին համար Գանձելի Տոմսակ է, իսկ երկրորդին համար՝ Վճարելի Տոմսակ:

Գնումի պարագայրն. — Պարտական ընել հայթայթից որ փոխգիրը կը քաշէ, եւ պահանջող՝ Վճարելի Տոմսակները:

Օրինակ. — Գնեցի Ա. ՄԻՆԱՍԵԱՆԸ 50 ոսկիի վաճառք.

ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻ Ա. ՄԻՆԱՍԵԱՆԻ 50 00 դր.

Վրաս կը քաշէ փոխգիր մը, զոր կ'ընդունիմ.

Ա. ՄԻՆԱՍԵԱՆ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒ 50 00 դր.

Կամ մէկ յօդուածով.

ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒ 50 00 դր.

Վաճառումի պարագային. — Պարտական՝ Գանձելի Տոմսակները, եւ պահանջող՝ յաճախորդը որ կ'ընդունի փոխգիրը:

Օրինակ. — Լ. Թաշճեանի ծախեցի վաճառք 60 ոսկիի.

Լ. ԹԱՇՃԵԱՆ ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻՒ 60 00 դր.

Վրան փոխգիր մը քաշեցի զոր կ'ընդունի.

ԳԱՆՉ. ՏՈՄՍԱԿՆԵՐ Լ. ԹԱՇՃԵԱՆԻ 60 00 դր.

Կամ մէկ յօդուածով.

ԳԱՆՉ. ՏՈՄՍԱԿՆԵՐ ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻՒ 60 00 դր.

55. — Զէօվ Կարգադրութիւն :

Գնումի պարագային. — Պարտական ընել հայթայթից որ չէրը կ'առնէ, իսկ պահանջող՝ սեղանաւորը կամ այն որ չէրը պիտի վճարէ (այն որու վրայ ժաշուած է) :

Օրինակ. — Զ. Մեծատուրեանի գնեցի վաճառք 70 ոսկիի.

ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻ Զ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆԻ 70 00 դր.

Տուի չէք մը Պանք Օթօմանի վրայ.

Զ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ ՊԱՆՔ ՕԹՕՄԱՆԻ 70 00 դր.

Վաճառումի պարագային. — Չէքը պէտք է նկատել հնչուն դրամ, քանի որ անմիջապէս ներկայացուելուն՝ զանձելի է. որով Սնտուկը պարտական, իսկ պահանջող՝ Յաճախորդը որ չէքը կուտայ:

Օրինակ. — Աստուրեանի ծախեցի վաճառք 80 ոսկիի:

ԱՍՏՈՒՐԵԱՆ ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻՆ 80 00 դր.

Փոխարէնը չէք մը առի.

ՍՆՏՈՒԿ ԱՍՏՈՒՐԵԱՆԻ 80 00 դր.

Իսկ մէկ յօդուածով.

ՍՆՏՈՒԿ ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻՆ 80 00 դր.

Եթէ չէքը տարբեր քաղաքի մէջ վճարելի է, պէտք է զայն Գանձելի Տոմսակ նկատել եւ ըստ այնմ զրել յօդուածը:

56. — Հաշուական փոխանցումով կարգադրութիւն :

Գնումի պարագային. — Պարտական ընել Ընդհ. Վաճառք, իսկ պահանջող՝ սեղանաւորը որ փոխանցումը կը կատարէ:

Օրինակ. — Աստարճեանէ զնեցի վաճառք 50 ոսկիի եւ Պ. Օթօմանի հաշուական փոխանցում կատարել տուի, այսինքն երկուքս ալ Պ. Օթօմանի քով հաշիւ ունենալով, զրեցի որ իմ հաշուէս Աստարճեանի հաշւոյն 50 ոսկի փոխադրէ:

ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻ ԱՍՏԱՐՃԵԱՆԻ 50 00 դր.

Փոխանցումէն վերջ.

ԱՍՏԱՐՃԵԱՆ ՊԱՆՔ ՕԹՕՄԱՆԻ 50 00 դր.

կամ մէկ յօդուածով.

ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻ ՊԱՆՔ ՕԹՕՄԱՆԻ 50 00 դր.

Վաճառման պարագային. — Պարտական ընել այն սեղանաւորը որու քով հաշուական փոխանցում կատարել կուտայ յաճախորդը, եւ պահանջող՝ Ընդհանուր Վաճառք:

Օրինակ. — Գարակէօգեանի 75 ոսկիի վաճառք ծախեցի. Գարակէօգեան եւ ես, երկուքս ալ Գրէտի Լիօնէի քով հաշիւ ունենալով, հրահանգ տուաւ որ իր հաշուէն իմ հաշւոյս 75 ոսկի փոխադրեն եւ այսպէսով իր առած վաճառքը վճարած եղաւ: Այս զործողութիւնը կ'արծանազրուի սապէս.

ԳԱՐԱԿԷՕԳԵԱՆ ՀՆԴՀ. ՎԱՃԱՌԻՆ 75 00 դր.

Փոխանցումէն վերջ.

ԳՐԵՑԻ ԼԻԾՈՒՅԻ ԳԱՐԱԿԻ 0ԶԵԱՆԻ 75 00 դրշ.
կամ մէկ յօդուածով.

ԳՐԵՑԻ ԼԻԾՈՒՅԻ ԸՆԴՀ. ՎԱՃԱՌՔԻՆ 75 00 դրշ.

57. — Կարասիի, Կալուածի, Արժեքրերու եւայլն գնում եւ վաճառում:

Դճումի պարագային. — Պարտական ընել այս հաշիւները, իսկ պահանջող՝ սնտուկը:

Օրինակ. — 7 ոսկիի զրասեղան մը զնեցի, կը զրեմ.

ԿԱՐԱՍԻՆԵՐ ՄՆՏՈՒԿԻՆ 7 00 դրշ.

Վաճառումի պարագային. — Ճիշդ հակառակը ընել:

Օրինակ. — Եթէ 20 ոսկիի արժէթուղթ ծախեմ, կը զրեմ.

ՄՆՏՈՒԿ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒ 20 00 դրշ.

58. Վաճառք վերադարձնել. — Եթէ մենք վերադարձնենք՝ վաճառումի նման, իսկ եթէ յաճախորդը վերադարձնէ՝ զնումի նման յօդուած զրել պէտք է:

59. Առեւտրական բուղբ մը զեղչել. — Թուղթ մը զեղչել կը նշանակէ այդ թուղթը զնել՝ այսինքն արժէքը վճարել, տոկոս առնելով կամ առանց առնելու: Առաջին պարագային՝ պարտական ընել Գանձելի Տունակները որ կ'առնէ, եւ պահանջող Սնտուկը՝ տուած դրամին համար, եւ Տոկոսի Հաշիւը՝ առնուած տոկոսին համար:

Օրինակ. — 100 ոսկիի թուղթ մը զեղչելով 98 ոսկի վճարեցի, այս 2 ոսկին ինծի համար շահ մըն է: Ասիկայ կը ցուցնենք.

ԳԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ ԶԱՆԱՉԱՆԵՐՈՒ 100 00 դրշ.

ՄՆՏՈՒԿԻՆ	98 00	դրշ.
ՇԱՀ ՈՒ ՎՆԱՍԻՆ	2 00	»
<hr/>		
	100 00	»

Երկրորդ պարագային, այսինքն երբ առանց բան մը վար դնելու կը զեղչեմ, Շահ ու Վնասի հաշիւ չի մնար:

60. Առեւտրական բուղբ Զեղչել տալ. — Թուղթ մը զեղչել տալ կը նշանակէ այդ թուղթը ծախել, տոկոս տալով կամ առանց տալու:

Օրինակ. — 50 ոսկիի տոմսակ մը զեղչել տուի եւ 45 ոսկի առի, 5 ոսկին ինծի համար վնաս է: Այս զործառնութիւնը կ'արձանագրենք սապէս.

ՉԱՆՉԱՆԵՐ	ԳԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒՆ	50 00 դր.
ՄՆՏՈՒԿ	45 00	դր.
ՇԱՀ ու ՎՆԱՄ	5 00	"
	50 00	"

Երկրորդ պարագային, այսինքն երբ թուղթը առանց տոկոսի գեղջուած է, նահ ու վնասի խնդիր չիկայ:

61. Սուեւտրական թղթերու նորոգութիւնը. — Եթէ թուղթ մը վճարօրին չվճարուի՝ կրնայ նորոգութիլ, այսինքն տեղը ուրիշ թուղթ մը տրութիլ, տոկոսով կամ առանց տոկոսի:

Այս պարագային զրուելիք յօդուածը պէտք է ցուցնէ.

I. Նոր թղթին՝ զանձելի տոմսակէն առնուիլը կամ վճարելի տոմսակէն տրութիլը:

II. Հին թղթին զանձելի տոմսակէն ետ տրութիլը կամ վճարելի տոմսակէն ետ առնուիլը:

Տոկոս առնուելու կամ տրուելու պարագային ալ Տոկոսի Հաշիւը պահանջող կամ պարտական ընելու է:

Օրինակ Ա. — Յաճախորդէ մը 10 ոսկիի տոմսակ մը առած ատենս զրած էի.

ԳԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ	ՑԱՃԱԽՈՐԴԻՆ	10 00 —
-------------------	------------	---------

Վճարօրին չվճարուելու պարագային՝ 10 ոսկինոց նոր թուղթ մը կուտայ, որով հին թուղթը իրեն կը վերադարձնեմ ու կը զրեմ.

ԳԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ	ԳԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒՆ	10 00 —
(նոր թուղթ)	(հին թուղթ)	

Օրինակ Բ. — Հայթայթիչի մը հրամանին 15 ոսկինոց տոմսակ մը ստորագրած էի եւ զրած.

ՀԱՅԹԱՅԹԻՉ	ԳԱՆՉԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒՆ	15 00 —
-----------	----------------------	---------

Զկրնալով վճարօրին վճարել՝ նոր պայմանաժամ կը խնդրեմ եւ նոր թուղթ մը կը ստորագրեմ; բնականաբար հինը ետ առնելով.

ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ	ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒՆ	15 00 —
(հին թուղթ)	(նոր թուղթ)	

62. Ս. Վճար մնացած տոմսակներ. — Գանձելի Տոմսակ անունին տակ գտնուած թղթերէն մէկը եթէ վճարօրին չվճարուի, այլ եւս չկրնար այդ անունին տակ մնալու շարունակել:

Այս պարագային պէտք է պարտական ընել այդ թուղթը ստորագրող անծը եւ պահանջող ընել Գանձելի Տոմսակը, ցուցնելու համար թէ մեր թղթապահակին մէջ այդ տեսակ թուղթ մը չկայ (թէեւ իրապէս թուղթը դեռ մեր ֆովն է, բայց նման չէ այն միւս

Թղթերուն որոնի թղթապահակին մէջ իրենց - պայմանաժամին յրանալուն կը սպասեն) եւ թէ այդ թղթին ներկայացուցած գումարը կը պահանջենք ուղղակի ստորագրողէն:

Այսպէսով յօդուածը՝ զանձելի տոմսակ առնուելէ առաջ ունեցած վիճակը կը ստանայ:

Օրինակ. — Մէհմէտ Ֆահիզի 2375 դրուշի վաճառք ծախեցի ու փոխարէնը տոմսակ մ'առի՝ այդ տոմսակը վճարօրին չի վճարուեցաւ: Այս գործառնութիւնները կարգաւ հետեւեալ յօդուածներով կը ցուցուին:

Վաճառքը յանձնելէ վերջ.

ՄէջՄէՏ ֆԱԻԴ ՀՆԴՀ. ՎԱՃԱՌՔԻՆ 23 75 —

Տոմսակը առնելէ վերջ,

ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ ՄէՋՄէՏ ֆԱԻԴԻ 23 75 —

Տոմսակը չվճարուելէ վերջ.

ՄէՋՄէՏ ֆԱԻԴ ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒ 23 75 —

Այսպէսով երկրորդ յօդուածը երրորդով կը ջնջուի, ու միայն առաջին յօդուածը կը մնայ:

ՀԱՇԻԽՆԵՐՈՒ ՃԵԴՈՒՄԸ

63. Փորձակշիռ. — Կրկնատոմարի հիմնական սկզբունքն — ամէն պարտական հաշիւ պէտք է ունենայ իրեն համապատասխանող պահանջող հաշիւ մը — կը հետեւի թէ՝ միեւնոյն գումարը երկու անգամ կ'անցնի Մայր Հաշիւին մէջ, անգամ մը հաշիւի մը պարտքին, անգամ մըն ալ ուրիշ հաշիւի մը պահանջքին. հետեւաբար պարտական եւ պահանջող հաշիւներուն ընդհանուր գումարները պէտք է իրարու հաւասար ըլլան, իսկ Օրհաշիւին ընդհանուր գումարն ալ ասոնցմէ իւրաքանչիւրին հաւասար պէտք է ըլլայ: Հակառակ պարագիյին պէտք է հետեւցնել թէ սխալ մը տեղի ունեցած է կամ Օրհաշիւէն Մայր Հաշիւ տարուած ատեն, եւ կամ Մայր Հաշիւի Ընդհանուր Գումարներուն մէջ:

Փորձակշիռ կը կոչուի այն ցուցակը ուր նշանակուած են, Մայր Հաշիւէն առնուելով, պարտական եւ պահանջող հաշիւներու գումարները:

Աւելորդ է ըսել թէ իւրաքանչիւր հաշգւի Պարտիին եւ Պահանջէին տարբերութիւնները առնելով՝ եթէ Պարտիներէն մնացորդները եւ Պահանջէններէն մնացորդները զատ զատ իրարու վրայ գումարելու ըլլանք, այդ երկու գումարներն ալ իրարու հաւասար կ'ըլլան:

Մնացորդներու սիւնակներն ալ մինչեւ մէկ աստիճան վաճառականին կացութիւնը կը ցուցնեն:

Փորձակշիռ. — Balance de vérification, مدقق ميزانی

Կարելի եղածին չափ յաճախ, զոնէ իւրաքանչիւր ամսու վերը, պէտք է փորձակշիռ հանել պատահած սիսալները աւելի դիւրութեամբ կարենալ գտնելու համար:

64. Օրիաշիւին սիսալները ուղղել. — Օրէնքը կ'արգիլէ Օրհաշիւին մէջ աւրել, թէրթել, տողի մը մէջ բաներ աւելցնել. հետեւաբար Օրհաշիւին սիսալները պէտք է հետեւեալ կերպով ուղղել:

Այդ սիսալները զլխաւորաբար հետեւեալները կրնան ըլլալ.

I. Գործողութեան մը մոռացումը. — Պէտք է իր թուականովը այդ գործողութիւնը անցնել, անմիջապէս որ տեսնուի թէ մոռցուած է :

Օրինակ. — Յունվար 2ին կատարուած գնում մը արծանազրել մոռցուեր ու Յունվար 15ին այդ մոռացումը տեսնուեր է:

Այդ օրուան թուականով կը զրենք յօդուածը, իբր բացառութիւն աւելցնելով. « Զին տեղի ունեցած եւ մոռցուած » :

II. Երկու անգամ անցած գործողութիւն. — Պէտք է ջնջել ասոնցմէ մէկը հակառակ յօդուած մը անցնելով :

Օրինակ. — Խախմ Ֆրանքէլիի 125 դրուշի կանխիկ ծախուած վաճառք մը սիսալմամբ երկու անգամ Օրհաշիւ անցած է :

Այդ յօդուածներէն մին կը ջնջենք հակառակ յօդուածով մը, այսինքն կը զրենք.

ԸՆՏՈՒԿԻՒ

ԸՆՏՈՒԿԻՒ

125 —

III. Յօդուածի մը սիսալ խմբագրութիւնը. — Պետք է այդ յօդուածը ջնջել հակառակ յօդուածով մը, եւ յետոյ բուն յօդուածը անցնել :

Օրինակ. — 375 դրուշի կանխիկ գնումի մը համար զրեր ենք սիսալմամբ.

ԸՆՏՈՒԿ

ԸՆՏՈՒԿԻՒ

375 —

Այս սիսալը ջնջելու համար կը զրենք.

ԸՆՏՈՒԿ

ԸՆՏՈՒԿԻՒ

375 —

Եւ յետոյ բուն յօդուածը կը զրենք.

ԸՆՏՈՒԿ

ԸՆՏՈՒԿԻՒ

375 —

IV. Հաշիւներու մէջ սիսալ. — Հաշիւներու սիսալները կ'ըլլան կամ աւելի եւ կամ պակաս զրուելով :

Առաջին պարագային մէջ տարբերութիւնը կը ջնջեն հակառակ յօդուածով մը. Երկրորդ պարագային մէջ տարբերութիւնը կ'աւելցնեն նման յօդուածով մը:

Օրինակ Ա. — 50 ոսկիի վաճառումի մը տեղ, 60 ոսկի զրեր ենք.

ՄՆՏՈՒԿ	ԸՆԴՀԱՅԻՆ	60 00 —
---------------	-----------------	----------------

Տարբերութիւնը կը ջնջենք զրելով.

ԸՆԴՀԱՅԻՆ	ԸՆԴՀԱՅԻՆ	10 00 —
-----------------	-----------------	----------------

Օրինակ Բ. — 60 ոսկիի տեղ, 50 ոսկի զրեր ենք.

ՄՆՏՈՒԿ	ԸՆԴՀԱՅԻՆ	50 00 —
---------------	-----------------	----------------

Տարբերութիւնը կ'աւելցնեք զրելով.

ՄՆՏՈՒԿ	ԸՆԴՀԱՅԻՆ	10 00 —
---------------	-----------------	----------------

65. Հաշուեկշիռ. — Վաճառական մը ժամանակ մը — վեց ամիս կամ սովորաբար տարի մը — զործելէ վերջ՝ պէտք է վայրկեան մը կանգ առնէ դէպի ետ ակնարկ մը նետելու եւ տեսնելու համար թէ շահած է, թէ վնասած եւ որչափ, որպէս զի անոր համեմատ որոշէ անկէ վերջ իր բռնելիք ընթացքը։ Այս բանին համար վաճառականը պէտք է զիտնայ թէ ինչ^Չ ունի ինք — դրամ, վաճառք, կալուած, յաճախորդներու վրայ պահանջք — եւ անոնց փոխարէն ո՞րքան պարտք ունի, եւ թէ վերջապէս ինչ^Չ է զոյքին եւ պարտքին տարբերութիւնը, այսինքն ո՞րքան է իր դրամագլուխը։

Այս արդիւնքը իմացնող տետրակը Հաշուեկշիռ Տետրակն է — օրէնքին պահանջածներէն մէկը, որու վրայ խօսած ենք արդէն։

Վաճառականի մը համար երբ ըստի թէ հազար ոսկիի տէր է, կամ հազար ոսկի դրամագլուխ ունի, կը հասկցուի թէ այդ մարդը իր ունեցածները ծախելէ եւ պարտքը տալէ վերջ՝ իրեն հնչուն դրամ հազար ոսկի կը մնայ։

Արդ՝ վաճառականի մը դրամագլուխը զիտնալու համար վարկեան մը այնպէս պիտի երեւակայենք թէ ունեցածները պիտի ծախենք, պահանջքը պիտի զանձենք, պարտքը պիտի վճարենք եւ աւելցածն ալ ծեռքը պիտի տանք։

Այս բանը կարենալ ընելու համար երեւակայական յաճախորդ մը կը հնարենք. անոր կը ծախենք վաճառականին զոյքը — անանկ զիներով մը որ կարելի ըլլայ իրապէս ծախել հաշուեկշիռը պատրաստուած օրը. անոր կը յանձնենք նաեւ վաճառականին պարտքը եւ դրամագլուխը՝ որ արդէն, ինչպէս տեսանք, պարտքը կազմող հաշիւներուն մէջը դասած էինք։

Այդ երեւակայական յաճախորդին հաշիւը՝ Ելի Կշիռն է, որ պարտական կ'ըլլայ մեր զոյքին համար, եւ պահանջող՝ մեր պարտքին համար։

Հաշուեկշիռը պատրաստելու համար, նախ պէտք է փորձակշիռին միջոցաւ ապահովուի թէ Օրհաշիւէն Մայր Հաշիւ բոլոր

Հաշուեկշիռ · — Bilan, حکم.

զործողութիւնները ճիշդ անցած են. յետոյ մի առ-մի Մայր-Հաշիւին մէջէն իւրաքանչիւր հաշիւի կշիռը առնել, պարտական կշիռ՝ ելքի կշիռին պահանջքին տանիլ, իսկ պահանջող կշիռն ալ՝ ելքի և շուրին պարտքին տանելով՝ բոլոր այդ հաշիւները զոցել:

Ստորաքաժանում եղող հաշիւները պէտք է զոցել՝ զանոնք ընդհանուր հաշիւներուն տանելով :

Այսպէս, օրինակի համար, տոկոսի հաշիւր, անձնական ծախքը, տնական ծախքը եւ այլն զոցել Շահ ու Վնասով. այս ալ զոցել Դրամագլուխով, որ պարտքը կազմող հաշիւներէն մէկը ըլլալով, կը զոցուի Ելփի կշիռով:

Շահ կամ վնաս արտադրող հաշիւները, եւ օրինակի համար, Ընդհ. վաճառքը՝ զոցել Շահ ու Վնասով :

Օրհաշիւին մէջ վերջին յօդուածը ուրեմն պիտի ըլլայ.

ԵԼՓԻ ԿՇԻՌ

ԳՈՅՔԻՆ

ՊԱՐՏՔ

ԵԼՓԻ ԿՇՈՒԻՆ

Այսպէսով Ելփի կշիռը ինքնին կը զոցուի :

